48ՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 1043 — Կ. ՊՈԼԻՍ — ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 15/28 ՆՈՅԵՄԲԵՐ 1904 — 20 ՐԱՄԱԶԱՆ 1322 — 15 ԹԸՇՐԻՆԸ ՍԱՆԻ 1320

Journal Arménien
MANZOUMÉ-I-EFKIAR
Grand' Rue de la S-Porte,
CONSTANTINOPLE

ՑԱՒ ԵՒ ՑՆՕՐՔՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱՅԷՐԵԱՆ
ՈՐՈՒ Կ'ՈՒՂՂՈՒ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳՐՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
38, Պապը Ալի Ճատտէսի, 38

Խմբագրութեան ուղղուած գրութիւններ ետ չեն տրուիր

Մանկուամի Էֆքեար

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՌԱՒՕՏԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

منظومهٔ افکار
ارمنیجه یومی وسیاسی غزتهدر
صاحب امتیازی : اوهانس قریب
دارهخانهسی باب عالی جادهسنده نومرو ۳۸

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

	Տարեկան	Վեցամսեայ
Պոլսոյ համար	80 ղ.	50 ղ.
Գաւառներու համար	108 »	60 »
Արտասահմանի համար	25 ֆր.	18 ֆր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Մէկ անգամի համար, տողը 5 դրուշ։
Մէկ անգամէ աւելի ժամուցմանց համար մասնաւոր պայմաններ։

10 ՓԱՐԱ — ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ "ՄԱՆԶՈՒՄԷ„ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ — 10 ՓԱՐԱ

ՊՕՍԹԸՆԷՆ ՆԱՄԱԿ

ՆԱԽԱԳԱՀ ՌՈՒԶՎԷԼԹԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

(«Մանզումէ»ի մասնաւոր թղթակցէն)

«Ռուզվէլթի վաստկեցաւ.»

Հեռագիրները անչուշտ տարածեցին այս լուրը նոյն կէս գիշերին իսկ 8 Նոյեմ. Գշ. և հանրապետականները հրճուեցան իրենց յաղթանակին վրայ։

Սիրտս հանգիստ չէր երբէք ու չէի կրնար նեղկիկ սենեակի մը մէջ սպասել այդ գիշերը, մինչեւ որ լոյսը իրեն հետ նախագահական ընտրութեան վճիռն արձակէր. դուրս կ'ելնեմ սենեակէս ընկերի մը հետ որ իր փորձառութիւնովը միեւնոյն ատեն առաջնորդի դերը ունի։

Պօսթընի փողոցները երկսեռ բազմութիւն մը կը լեցնէ. թէեւ ամէն գիշեր անցուդարձը աղմուկը անտանելի կը դառնան, բայց այս գիշեր բոլորովին կը տարբերի. իւրաքանչիւր ժամի գրեթէ թերթ մը կը հրատարակուի զորս պզտիկ մանչեր անուններուն տակ առած հոս հոն կը վազեն ծախելու համար, ամէն մարդու դէմքի վրայ սպասումի փոթ մը կայ ռամկավարականներ. «Արդեօք Բարքերը պիտի յաղթի» կը փսփսան, հանրապետականներ. «մինչեւ հիմա Ռուզվէլթը վաստկած է» կը խօսին։

Խմբագրատուններու առջեւ հոծ խառնիճաւնած ամբոխ մը, աչքերը միշտ խմբագրատան պատին սեւեռած, վայրկեանը վայրկեանին եկած հեռագիրներուն հրատարակութիւնը կը կարդայ անգամ մը Ռուզվէլթին քուէն է որ մեծ թիւը վաստկած է, քիչ մը վերջը Բարքերն է վաստկողը ու ահա սոսկալի «հուրրայ» մը, ուրախութեան անտանելի աղաղակ մըն է կը փրցուէ ռամկավարական ամբոխ մը, ոստիկաններ հարիւրաւորներով կան այս տեսակ փողոցներուն մէջ. բազմութիւնը ծովի մը ալիքին պէս կը յառաջանայ առանց կրնալու քայլ փոխել, ու այսպէս խառնակ վիճակի մէջ պոռոքձչուկի, երգի, վազքի մէջ գիշերը դանդաղօրէն կը յառաջանայ։

Բազմութիւնը ամբողջ գործաւորներէ կը բաղկանայ, որոնք սակայն առանց նկատի ունենալու առաւօտի չարաչար աշխատանքը մինչեւ կէս գիշերէն վերջն ալ. աչքերնին խմբագրատան պատերուն յառած, վերջնական լուրին կ'սպասեն ուրախ կամ տրտում յառաջանալու դէպի տեսնեակ։

Մինչեւ վերջին վայրկեանը, ուր տակաւին քուէները չեն վճռեր Ռուզվէլթին կամ Բարքերին բախտը. կուսակցականները այս կամ այն ընտրելին դէմ կը տեղան նախատինքներ, բայց երբ վերջապէս վճռական վայրկեանը այս կամ այն իբր նախագահ կը հրատարակէ, ամէն բան կը հանդարտի ու հակառակ կուսակցութիւններն ալ պատշաճ յարգանքով ու ակնածանքով կը վերաբերուին իրենց նախագահին հանդէպ կէս մեացած խօսքերն ու յուզումները ապագային, և տարի վերջին թողելով։

Առաջին անգամն էր որ նախագահական ընտրութեան մը պատճառով տարօրինակ եռուզեռի մը ներկայ կը գտնուի, թէեւ այս տարի ամէնէն աւելի խաղաղ ու հանդարտ անցնող տարին եղեր է իր նախորդներուն հետ բաղդատելով։

Նիւ Եորքի և քանի մը տարակուսելի նահանգներու քուէները մեծ դեր ունէին այս ընտրութեան մէջ և կ'ուշանային. այս ուշացումը վայրկեան մը Բարքերի յաղթելը հաւանական կ'ընէին, որովհետեւ Նիւ Եորք ամէնէն աւելի ռամկավարական ճանչցուած քաղաքներէն մէկն է սակայն հակառակ պարագան տեղի ունեցաւ և Ռուզվէլթ թէ՛ Նիւ Եորքի և թէ՛ տարակուսելի նահանգներուն մէջ քուէներու մեծամասնութիւնը վաստկելով, այնպիսի ջախջախիչ յաղթանակ մը տարաւ, որուն նմանը քիչ անգամ պատահած էր։

Նախագահ Ռուզվէլթի ընտրութիւններու արդիւնքը իմանալուն պէս իր շնորհակալիքը յայտնեց ամերիկեան ժողովուրդին իր մասին ուղեցած վըստահութեանը համար ու հաւատաց թէ՝ յաջորդ ընտրութեան, ո՛և է պարագայի տակ, նախագահութեան ընտրելի չպիտի ներկայանայ։

1900ին նախագահական ընտրութեան ատեն Մաքինլիի վաստկած քուէն որ շատ մեծ կը նկատուէր, Ռուզվէլթի իր այս ընտրութեան մէջ գերազանցեց զայն։ Ահա երկու ընտրութիւններու արդիւնքը որմէ կրնայ հակադրել տարբերութիւնը։

1900ին Նախագահական ընտրութեան արդիւնքը.

Մաքինլի շահած 264 քուէ, իսկ Պրայն 163 քուէ, իսկ այս ընտրութեան մէջ Ռուզվէլթ շահեցաւ 325 քուէ, եւ Բարքեր 151 քուէ. Ռուզվէլթի շահածին կէսէն ալ պակաս։

Նախագահական ընտրութեան արդիւնքէն վերջ Բարքեր հետեւեալ հեռագիրը ուղղեց Ռուզվէլթի.

«Նախագահին՝ Ուօշինկթըն.

«Ժողովուրդը իրենց քուէներով յայտնապէս հաւանութիւնը տուաւ ձեր վարչութեան և ես կը շնորհաւորեմ ձեզ։»

ԱԼԹՇԷՆ Պ. ԲԱՐՔԵՐ

Ահա պատասխանը.

«Ալթշէն Պ. Բարքեր. Ռոզմաունթ.

«Շնորհակալ եմ ձեզի, ձեր շնորհաւորութեան համար »

Ռուզվէլթի շահելովը ժողովուրդը մեծ երկիւղէ մը ազատեցաւ. ինչպէս ասկէ գրեթէ տասնեակ մը տարի առաջ, չորս տարի սոսկալի կացութեան մէջ ապրեր էր խեղճ ժողովուրդը. կառավարութենէն յատկապէս բացուած ձրի ճաշարաններու կարօտ. այս անգամ ալ անցեալին սոսկալի պատկերը կը սարսռեցնէր գործաւորները որոնք կը սիրէին դարձեալ Ռուզվէլթը նախագահ տեսնել հոգ չէ թէ օրական 10 ժամի չարաչար տաժանքը պիտի տեւէ։

ՄԱՆՈՒՄ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Վերջերս Պոլսական օրաթերթի մը մէջ հարցում եղած էր թէ՝ Հայ լեզուի տառերը պէտք է իրենց հին անուններով սորվեց ել տղոց. թէ նոր անուններով, այսինքն «այբ բէն գիմ»ը նախընտրել թէ «ա—բը—գը—դը»ն։

Մ. Սուրեան էֆ. այս հարցումին փութացեր էր պատասխանել նոյն թերթին մէջ և խնդրոյ նիւթ եղող թէ՝ հին և թէ նոր դրութիւնները երկուքն ալ հաւասարապէս հակամանկավարժական և հետեւաբար անանխընտրելի նկատելով, ուրիշ մը, երրորդ և աւելի դիւրուսոյց ու մանկավարժական դրութիւն մը ցոյց տուած էր։

Իրաւ է թէ Մ. Սուրեան էֆ.ի հետ մենք ալ կը կրկնենք ու կը պնդենք այդ «ա-բը—գը-դը» նորելուկ ուքմանին դրութեան «այբ—բէն—գիմ»ին չափ, և գուցէ անկէ ալ աւելի անտեղի, անտրամաբան ըլլալը. և հետեւաբար ուրիշ աւելի տրամաբանական, դիւրընթռնելի ու մանկավարժական մեթոտի մը անհրաժեշտութիւնը, սակայն համակրելի ուսուցիչը անշուշտ կը ներէ մեզի քանի մը դիտողութիւններ ընել իր ցոյց տուած դրութեան մասին. այդ իր պաշտպանած դրութիւնը՝ իր ճշմարիտ և ուղիղ ըմբռնումին մէջ, կը խոստովանինք թէ հիանալի է, և անոր արդիւնքը գործնականին մէջ՝ իրաւ որ գերազանց ու հրաշալի։

Նախ ըսենք թէ գերմանական մանկավարժութենէն փոխ առնուած ընթերցանութեան ադ ակնարկուած մեթոտը մեզի համար բոլորովին նորութիւն մը չէ երբեք. քանի որ Գերմանիայէն դարձող հայ մանկավարժներու կողմէ ռուսահայերուն մէջ գործադրուելէն ու բաւական աղմուկ հանելէն ետք, գրեթէ տասը-տասներկու տարիներէ ի վեր. մեր մէջ եւս տեղ տեղ փորձուած, ընդունուած ու յաջողած թիւն գտած է։ Այս դրութեան համեմատ պէտք է տղուն սորվեցնել նախ՝ ոչ թէ միայն ձայնաւոր գիրերը (ինչպէս կ'ըսէ Սուրեան էֆ.) այլ ձայնաւորներուն երկբարբառները իրենց հնչումներով, որովհետեւ այս դրութեան մէջ երկբարբառներն ալ (աւ, իւ, ու, եա, եւայլն) իբր պարզ ձայնաւորներ կը նկատուին։ Ցետոյ այդ ձայնաւորներուն երկբարբառներուն վերջն ու առջեւը դնելով բաղաձայն գիր մը՝ նոր նոր վանկեր կազմել տալ այդ ձայնաւորին կամ երկբարբառին և ոչ թէ իւրաքանչիւր տառի համար 18 հնչումներ սորվեցնել տղուն ձայնաւորներուն բաղաձայն գիրի մը առջեւն ու վերջը դրուելէն կազմուած (ինչպէս կ'ըսէ դարձեալ Սուրեան էֆ.)։ Եւ ասոնց տարբերութիւնը բաւական մեծ է կարծեմ. բաղաձայն գիր մը ոչ թէ 18 հնչումներ՝ այլ մէկ հատիկ հնչում մը անգամ չունի։ Եւ եթէ այդպէս «բա. բե. բէ բը բո բօ. բիւ, բու, աբ. եբ էբ իբ. ըբ ոբ օբ իւբ ուբ» իբր (բ) գիրին հնչումները սորվի տղան և այսպէս նաեւ միւս բաղաձայններունը, այն ատեն տղան երբեք ձայնաւոր գիրերու պէտք պիտի չզգայ, մանաւանդ գրելու ժամանակ. և եթէ հարկ ըլլար գրել (բարի). «բա» ձայնը պիտի գտնէր (բ) գիրին մէջ, «րի» ձայնը՝ (ր) գիրին մէջ. ու պիտի գրէր՝

Բ = (բա) + Ր = (րի) = բր միայն, և կամ չատ չատ բրի !!! իսկ եթէ այս անպատեհութեան առաջքն առնել կարելի ըլլայ իսկ. ինչպէս գրել կամ կարդալ միավանկ բառերը, ինչպէս նաեւ այն վանկերը որոնց մէջ վանկ մը կամ վանկեր կան՝ կազմուած բաղաձայնէ մը, ձայնաւորէ մը և դարձեալ բաղաձայնէ մը. Օրինակի համար (նոյն իսկ Սուրեան էֆ.ի օրինակը) ինչպէս պիտի արտասանուի (հաց) բառը...։ «Հա-աց=հաց» կ'ըսէ յիշեալը, ինդիրին տակէն ելլելու ուրիշ ճամբայ չկրնալով գտնել։ Բայց, ինդրեմ, «հա-աց» հա՞ց կ'ըլլայ թէ հա աց! Ինչպէս կարելի կ'ըլլայ նոյնպէս կարդալ կամ գրել Սրբուհի (Սրբբուհի) բառը. եթէ (ը) ձայնաւորը նոյն իսկ դրուած ըլլայ առաջին վանկին մէջ. վերջին երկու վանկերը (բուհի), ըսենք թէ տղան կարենայ գիրերին մը կարդալ բայց ինչպէս պիտի ելլէ (սր կամ սբր) վանկին մէջէն, արդեօք իր սորված իւրաքանչիւր տառի 18 հնչումներով (որոնց շնորհիւ Սուրեան էֆ. կը կարծէ հայ ընթերցանութեան վանկերուն արտասանութիւնը սորվեցուցած ըլլայ) պիտի կրնայ հանելուկը լուծել տղան իր պզտիկ գանկին մէջ...։ Այդ կերպ սահմանուած դրութիւնով (հաց ին պէս բոլոր միավանկ բառերը. և Սրբուհիին պէս իրենց մէջ քանի մը բաղաձայնէ կազմուած վանկեր ունեցող բառերը. ինչպէս կրկին բրինձ, սխտոր եւն.) կարելի չէ երբեք կարդալ ու գրել։

Այս քանի մը դիտողութիւններէն ետք, հարկ կը զգանք հոս համառօտակի բացատրել ընթերցանութեան ադ բոլորովին մանկավարժական դրութիւնը՝ իր ուղիղ ու ճշմարիտ գիծերուն մէջ։

Ընթերցանութեան այս դրութեան համեմատ. ինչպէս ըսինք. պէտք է նախ տղուն սորվեցնել ձայնաւորներն ու երկբարբառները իրենց հնչումներով. յետոյ բաղաձայն գիրերէն իւրաքանչիւրը՝ առանց այս վերջիններուն անուն կամ ձայն տալու. այլ իբր լոկ նշաններ ձայնաւորներէն ու երկբարբառներէն իւրաքանչիւրին նախ վերջը և յետոյ առջեւը դնելով նոր նոր վանկեր կազմել տալ, ինչպէս կ'առնենք օրինակի համար (ա) ձայնաւորը ու կ'ըսենք. ա՝ երբ վերջը դնենք այս նշանը (բ) կ'ըլլայ = աբ (ձայնով). ա՝ երբ առջեւը դնենք այս նշանը (բ) կ'ըլլայ = բա (ձայնով). ա՝ երբ վերջը դնենք այս նշանը (գ) կ'ըլլայ = ագ (ձայնով). ա՝ երբ առջեւը դնենք այս նշանը (դ) կ'ըլլայ = դա (ձայնով) եւայլն։

Այսպէս. պէտք է իւրաքանչիւր ձայնաւորի ու երկբարբառի վերջն ու առջեւը դնելով բոլոր բաղաձայն գիրերը մէկիկ մէկիկ չարունակել վարժութիւնները, որով կարելի կ'ըլլայ 25—30 դասով տղուն սորվեցնել «այբ ու բէն»ը և սկսիլ ընթերցանութեան, նախ միավանկ բառերէն սկսելով և հետզհետէ առնելով երկավանկ. եռավանկ բառերը։ Ինչպէս օրինակի համար՝ (հաց) = ա-աց — հաց. (կին) = ի-ին—կին. (բարի) = ա-բա-ի-բի—բարի. (Սրբբուհի) = ը-ըբ-սբբ-ու-բու-սբբբու-ի-հի—Սրբբուհի եւն.։

Միայն թէ պէտք է ժամանակ մը դիւրութեան համար բառին մէջտեղ չգրուող (ը) ձայնաւորը դնելով վարժեցնել։ Նոյնպէս պէտք է նախ ձայնաւորը. յետոյ ձայնաւորին վերջի բաղաձայնը և յետոյ ձայնաւորին առջեւի բաղաձայնը կարդալ ինչպէս տեսնուեցաւ վերի օրինակներուն մէջ։

Ասաքազար Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՎԵՀԱՓԱՌՆՈՐՀ Տ. Տ. ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԵՓԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՈՐ ՊՈԼԻՍԷՆ ԿԸ ՄԵԿՆԻ։

«ՄԱՆԶՈՒՄԷ»Ի ԹՈՒՐԹՈՆԸ 231

ՁՕՎԱԾ

ՈՍԿԻՆԵՐՈՒ ՃԱՄԲՈՒՆ

ՎՐԱՑ

ԶԷՊ

ՍՂԱԿԱՆ-ԸՆՏՐԱՆԵԱՆ ԼԵԶՆԻՑԷ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԺԲ.

Օրերով այցելուի երես չտեսնող պառաւը ոսկերիչին կնոջ այս ժամադէմ այցելութենէն խիստ երախտապարտ մնալով, սկսաւ եարն առջին պարարի՝ անոր, որ երկար յառաջաբաններէ ետք,

—Քա՞ քեզի աչքի լուսի եկայ, ըսաւ, չե՞ս ըսեր թէ ի՞նչ բանի համար։

Պառաւը բան չհասկնալով այս խօսքին, աչքի լուսի գալու ի՞նչ ունիմ որիմի. ըսաւ, մարդկանի մնացած է.

—Չէ՛ իրաւ որ աչքի լուսի եկայ, աչքդ լուս, քեռայրդ գտնուեցաւ։

—Ո՞ր քեռայրս, հարցուց պառաւը, չարունակելով իր միամիտ զարմանքը։

—Քանի՞ քեռայր ունիս, ողորմած հոգի քրոջդ էրիկը, Պողոսիկին հայրը, գտնուեցաւ, աչքդ լոյս, համար հազարներով ոսկիի տէր հարուստ մը եղեր է, Պողոսիկին ալ գրեր է որ մէկ քանի չաբաթէն Պոլիս պիտի գայ։

—Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, բացագանչեց պառաւը սարմանկելով, ո՞ր ձեռքովս խալ հանեմ։

—Հապա՞, յարեց դրացուհին, լրագիրները անգամ գրեցին, ամէն մարդ լսեց, հրամանքդ ինքո՞ր չես լսեր։

—Ես բանէ մը խապարիկ չունիմ, օրթի, ըսաւ պառաւը, չկրնալով իր մտքին մէջ հաշտեցնել թէ իր քսաներկու տարիներէ ի վեր անհետացած քեռայրը ինչպէս կրնար յանկարծ այնչափ հարստանալ ու գալ զաւակը գտնել։

Դրացուհին որ ամբողջ էութիւնովը իր մեծ աղջիկը Բոլիսի հետ ամուսնացնելու գաղափարին նուիրուած էր, սկսաւ անգամ մըն ալ մանրամասնել իրողութիւնը, պառաւին հասկնալի ընելու համար զայն։ Խեղճութիւնը պատած էր այս անկեալ կնոջ ընակարանը, և ամբողջ կեանքը առառապանքներով ու զրկանքով անցընող կինը չէր իսկ հրճուեր ընտանիքին վիճակած այս բարեբախտութեան վրայ, ուրկէ ինք ալ պիտի օգտուէր բնականաբար։ Ցուսահատութիւնը ծանր կապարի մը նման ճնշած էր սիրտին վրայ, և ուրախանալու զգացումը կարծես յատենապէս խոյս տուած էր անկէ։

Դրացուհին իր նպատակը առաջ մղելու փութկոտութեամբ,

—Պողոսիկը քեզի չեկա՞ւ, հարցուց։

—Չէ՛, օրթի, կրկնեց պառաւը, ո՞ւրկէ պիտի գայ։ Պողոսիկին երեսը տեսնող կա՞յ։ Տարին մէկ երկու հեղ կուգայ, ճի կ'ընէ կ'երթայ։

—Շատ սի՛ տեսնար, յարեց դրացուհին չոգոմարար ոճով մը, ճահիլ է, որերիս անցուցած չենք ադ տարիքը։ Հիմա անպատճառ այս հարստութեան լուրը առնելուն պէս գլուխը ժողուած են բարեկամները, թող չեն տար որ դուրս ելլայ։

—Հէքրատութեանը խերը տեսնայ, կրկնեց պառաւը միշտ չարունակելով իր յուսահատ ձեւերը։

—Ինչո՞ւ ատանկ կ'ըսես, քուկին քրոջդ զաւակը չէ՞, եղբօրորդի իմ որդի, քրոջդ զաւակը ինչ է, քուկինդ ինչ է։ Ալ ասկէ ետք Պողոսիկը քուկին ճիտիդ պարքն է անանկ չենք չնորհք աղջկան մը հետ կարգելը։ Ան ինչ անլրման զաւակ էր Պողոսիկս, ամէն օր մեզի կուգար, Թագուհիցիս հետ կը կարդային։

Պառաւը բնաւ այս ակնարկութիւններուն իմաստը ըմբռնելու վիճակին մէջ չէր, և հակառակ դրացուհիին այս ոճով սկսած յառաջաբաններուն, ինք կը չարունակէր իր կեանքը պարտասածի երեւոյթը։

Ոսկերիչին կինը ա՛յսչափ մը զգացընելէ ետք, միշտ ամուր կառչելով իր նպատակին, հետեւեալ օրն ալ մեծ աղջիկը հետը առած այցելեց պառաւին, և երկուքը մէկէն սկսան մաքրել, սրբել ու կանոնաւորել այս ողորմելի տունակը որ տարիներէ ի վեր, իր բնական վիճակին մէջ ձգուած էր, անխնամ ու լքեալ։ Ոսկերչին կինը այս ծառայութիւնները մատուցած ժամանակ չարունակ առաջ կը քչէր իր աղջկան գործունէութիւնն ու համեստութիւնը և վստահ ըլլալով որ Բոլ, այսօր կամ վաղը, ուրախալի աւետիսը մօրաքրոջը տալու համար պիտի այցելէ անոր, բնաւ չէր հեռանար պառաւին չրջանակէն։

Երրորդ օրը ա՛լ աւելի առաջ տարին իրենց մտերմութիւնը և պառաւին ամէն օրուան ճաշը իրենց առնէն բերելէ զատ անոր վրան գլուխն ալ կսկեցին։

Բոլ զինքը չրջապատող կնճիռները լուծած, Կէչկուառը լուութեան դատապարտած, Հրաչեայի գաղտնիքը եւ էլմանեանի գոյութիւնը հասկցած էր. հիմա ազատ զգալով զինքը ամէն մտահոգութիւններէ, այցելութեան եկաւ պառաւ մօրաքրոջը օրուն ասը մէջ իրենց վաղեմի դրացիներէն ոսկերիչին կինն ու աղջիկը տեսնելով խիստ հաճելի անակնկալի մը ենթարկուեցաւ։ Անմիջապէս վերյուշեց իր աղջոյութեան օրերը երբ այս բարի դրացուհին կը հոգար զինքը և կը թողուր որ թագուհիցային հետ կարդան ու խաղան։

Երիտասարդին մուտքը անբացատրելի հրճուանք պատճառեց մօր ու աղջկան, որոնք զայն դիմաւորելով սկսան համակիր լեզուով իրենց շնորհաւորութիւնները յայտնել։

Բոլ ամէնէն առաջ շնորհակալ եղաւ որ չէին մոռցած իր մօրաքոյրը զոր կը մխիթարէին իրենց գուրգուրանքովը և եռքը պատասխանելով անոնց հարցումներուն, հաստատեց թէ ճշմարտապէս գտնուած էր իր հայրը և թէ լրագրին ամբողջ հրատարակութիւնները իրողութիւններ էին։

— Պզտիկութենէդ յայտնի էր որ օր մը մեծ մարդ մը պիտի ըլլայիր, յարեց ոսկերչին կինը, ան ատենէն ամէն մարդու կ'ըսէի ես ասիկայ, փառք Աստուծոյ որ աչքովս տեսայ։

—Շնորհակալ եմ, պատասխանեց Բոլ, մոր մը պէս կը խնամէիք զիս, բնաւ մաքէս ելած չեն ձեր բարիքները, և պէտք եղած ատենը փոխարէն պիտի ցուցնեմ երախտապարտութիւնս։

Ոսկերչին կինը երիտասարդին այս խօսքերը իր աղջկանը թեկնածութեան ի նպաստ մեկնելով, սկսաւ մանուածապատ դարձուածքներով հասկցնել թէ չարունակ Բոլի խօսքը կ'ըլլայ իրենց ատն մէջ և թէ օրիորդը աղայ հասակէն ի վեր մանաւոր համակրանք մը կը տածէ Բոլի հանդէպ։

Երիտասարդը պէտք չուներ անուշտ այս աքօղուած բառերուն իմաստը հասկնալու, ինք արդէն անանց իր մօրաքրոջը ցոյց տուած մտերմութենէն կռահած էր ամէն բան, և այս միտքերը չվշտացնելով հանդերձ, օձիքը անանց ձեռքէն ազատելու միջոցներուն վրայ միայն կը խորհէր։

(Շարունակելի)

ԱՐՏԱՔԻՆ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

«Նայէ Ֆրայէ Բրէսէ»ի Նայեմբեր 24ի խմբագրականէն

Իռազմավարին դէպքերուն վրայ լուրերուն երկարատեւ բացակայութիւնը զինուորական գործունէութեան ընդհանուր դադար մը չի նշանակեր բնաւ։ Իրաւ է որ քնութեան սահմանին հետ մէկտեղ Մուքտէնի ռազմավայրին վրայ ալ լռութիւն մը, դադար մը կայ պատերազմական մեծամեծ շարժումներու մասին, ընդհանրապէս Բորթ Արթուրի առջեւ պաշարման ընթացքը ո՛ւ է ընդհատում չի կրեր։ Այս տարբերութիւնը առաջ կուգայ երկու զինուորական գործողութեանց դաշտերուն, գետնի ներքնական զանազանութենէն, նաեւ այն տարբեր հանգամանքներէն որոնց մէջ տեղի կ'ունենայ գործողութիւնը Բորթ Արթուրի առջեւ։ Արդէն ասկէց առաջ բացատրեցինք թէ Մուքտէնի առջեւ ներկայ կացութիւնը չի կրնար իր լուծումը գտնել մէկ կողմի ճակատին յարձակմամբը միւս ճակատին վրայ, որ անմիջապէս անոր դէմը կը գտնուի, այլ պէտք է նախ և առաջ կողմնակի շարժումներով վանելով Թշնամին թեւերուն հաղորդակցութիւնները, որպէս զի անկա պատնաւորուի իր ճակատին ամուր դիրքերէն դուրս ելնել թեւերը պաշպանելու համար, և այսպէս միայն կարելի է ճակատամարտը փոխադրել բաց դաշտի վրայ։ Այսօր Մուքտէնէն եկած տեղեկութիւն մը ցիդ բոլորովին այս տեսակէտը կը պարզէ։

Բայց այս ռազմավարութիւնը՝ որուն նպատակն է թշնամին կողերը պաշարել և անոր նահանջի գլխաւոր գիծերուն վրայ գործել, ստուար զինուորական զօրութիւն կը պահանջէ, որպէս զի անջատ և անկախօրէն ինքնաբաւ գունդերով կարելի ըլլայ ոտնակոխ ընել թշնամին յարուցած արգելքները։ Ասոր համար յարձակողական ձեռնարկող կողմը թուական առաւելութեան պէտք ունի. բայց ներկայ զինուորական կացութեան մէջ զօրքերուն թիւը չի ներկայացներ նշանակալից առաւելութիւն մը, որովհետեւ հարկ կ'ըլլայ ամրացած ճակատային գիծերէն զօրք պակասցնել՝ թեւերը պաշարելու համար համեմատական առաւելութիւն մը ձեռք բերելու նպատակաւ։ Ներկայ ամուր պատըսպարաններուն տակ ամբողջ զինուորական ուժերուն քառորդը, նոյն իսկ ասկէց աւելի քիչը կը բաւէ անխախտելի ընդդիմութիւն մը ընելու համար ճակատային ընդհարումի մը միջոցին։ Մնացեալը կարելի է գործածել կողմնակի շարժումներու համար, որոնք ա՛յնքան աւելի կը յաջողին ապահովապէս սրքան թշնամին յատկացուցած ըլլայ աւելի զօրք այդ շարժումներուն համար։ Եթէ երկու հրամատարներէն մէկը ի վիճակի ըլլար օգտակարապէս գործածել իր հաւաքական այժերը ճարտար ռազմագիտութեան մը և հնարամտութեան մը շնորհիւ, ներկայ կացութեան մէջ իւրաքանչիւրը ունի բաւական թուով զօրք յաջողակ յարձակողականի մը սկսիլ կարենալու համար։ Բայց ինչ որ մինչեւ հիմա տեղի կ'ունենայ պատերազմական թատերաբեմին վրայ, ճարտարութիւն չէ, այլ մի միայն սովորական արուեստ։ Այս Պատերազմին մէջ մէկ անգամ միայն — Լիաօանկի առջեւ — Սեամա ուզեց ճարտարութեան դիմել սովորական արուեստէն վեր բարձրանալով, բայց կը պակսեր իրեն ասոր համար անհրաժեշտ քանը — սիրտ։ Իր ճակատին հոգ տանելու համար Տուրօքին շա՛տ տկարացուց՝ անոր բանակէն առնելով մեծամեծ գունդեր որոնք կողմնակի շարժումին յաջողութեան պիտի կրնային նպաստել։ Յարձակողականի համար միշտ թուական առաւելութիւնը անհրաժեշտ չէ, բաւական է որ Հրամատարը կարենայ և հանկնայ վճռական տեղին վրայ ամփոփել թուական առաւելութիւնը, և նուազագոյն թիւ մը թողուլ միայն անկարեւոր կամ ամրացած կէտերուն վրայ։ Թիւը չէ որ ինքնին կուտայ յաղթութիւնը, այլ իր ուժերը գործածելու յարմար կերպը և տեղը։ Եթէ երկու ծէրութիւններէն մին ներկայ կացութեան մէջ իր հակառակորդին ոյժերուն կրկինն ալ կարենար ունենալ, երբեք յաջողութիւն մը պիտի չկարենար ձեռք բերել՝ թշնամին ամրացած դիրքին վրայ ուղղակի յարձակում մը ընելով։ Այս պատճառաւ յարձակողականի որոշում տուող հրամատարը — ըլլա՛յ Սեամա, ըլլա՛յ Փուրօքաթքին — պարտաւոր է կողմնակի ճարտուրմով միայն գործել, որպէս զի շակատամարտին դաշտը փոխադրուի ուրիշ տեղ մը՝ ճակատային ամրութիւններէն դուրս։ Այս դիտաւորութիւնը ի գործ դնելու համար ալ սովորական արուեստէն տարբեր բան մը պէտք է — ճարտարութիւն։ Այս է պատճառը որ մինչեւ հիմա ճարտնական ամէն յաջողութիւններէն վերջն ալ յաղթութիւնը տակաւին նժարին մէջ կը մնայ։ Եթէ երկու հրամատարներէն մին ունենար պէտք եղած ընդունակութիւնը՝ սովորական արուեստին չափէն ու միջինէն վեր բարձրանալու, ներկայ կացութիւնը գուշակելով պիտի չթողուր որ իր հակառակորդը պատնիշաւորուի, կամ նախապատրաստուած ամրութիւններու մէջ դիրք բռնէր։ Սեամա լրջօրէն չէր կրընար արգելք ըլլալ, որովհետեւ Ռուսք արդէն պատրաստ դիրքեր ունէին Լիաօանկի և Մուքտէնի առջեւ։ Այսու հանդերձ յաջողեցաւ իսկ Թայցէի հարաւային կողմը գրեթէ անկարելի ընել Բուրօքաթքինի մնալը և փութով պատնէշներու մէջ ամրափակուիլը։ Բնեց զայն վեր Բուրօքթի կողմնակի հնարքներուն միջոցաւ։ Բայց Շահոյի վրայ մինչեւ իսկ մէկ անգամ գոնէ փորձ մը չըրաւ իր յարձակողականը շարունակելով, և Ռուսերուն մէկ թեւին դէմ իր հաւեմատական առաւելութիւններէն օգտուելով, ռուսական ամրութիւններուն տիրանալ, և կամ պարտաւորել զանոնք բաց դաշտի վրայ նոր ճակատամարտի մը։ Բայց աւելի մեղադրելի է Բուրօքաթքին, որ Ճաբոնցիներուն ժամանակ թողուց ամրութիւններ չինելու իր անմիջական մօտակայքը, գրեթէ քթին տակ, և անյարձակելի ռազմ մը յարդարելու ճակատին կողմէ։ Մանաւանդ որ երկու հրամատարներն ալ իր անցեալ փորձառութիւններէն կրնային սա՛ դասը քաղած ըլլալ թէ, նոր զէնքերուն շնորհիւ պաշտպանողականին ամրութիւնը և ասով ձեռք բերուած առաւելութիւնը անժխտելի ըլլալով յարձակող կողմին ռազմագիտական և ռազմավարական բոլոր ջանքերը պէ՛տք է նպատակ ունենան թող չտալ որ հակառակորդը ամուր դիրքեր բռնէ, և պարտաւորել զայն շարունակ որ բաց դաշտի վրայ գտնուի կամ գայ։ Այս բանին յաջողելու համար կարելի եղածին չափ արագաշարժութիւն, յանդգնութիւն և կորով պէտք է թշնամին հալածելուն մէջ, գործածել պէտք է ամէն նպաստաւոր առիթ, ո՛ր ան ալ անբաւական երեւի, և առաջին պայմանն է մերժել ո՛ւ է վարանք և ո՛ւ է ձգձգում, որ այս պատերազմին բնորոշ հանգամանքը եղած է։

Ներկայ զինուորական կացութիւնը, որով երկու բանակները իրենց դիրքերուն մէջ ամրացած են և որուն լուծումը ռազմավարական դժուարին խնդիր մըն է երկու հրամատարներուն համար ալ, երկուքն ալ սիւնոյն ժամանակ մեղադրելի կամ յանցաւոր կ'ընէ։ Իրենց կացութեան ամէնէն մեծ աննպաստ պարագան անմիջական մօտաւորութիւնն է երկու ճակատներուն, որ գրեթէ անլուծելի կ'ընէ յարձակման մը հնարաւորութիւնը, և պարապ տեղը ա՛յնքան զինուորներ կ'անտրկին կը մնան ընդարձակ տարածութեան մը վրայ։ Պատերազմի միջոցին զինուորը կա՛մ պէտք է քալէ և կռուի կամ պէտք է հանգչի։ Բայց հիմա հոս բան մը չըներ, գործ մը չի տեսներ, և թնդանօթի կրակին ու մանր մունր յառաջապահական ընդհարումներուն պատճառաւ ալ անտանելի վիճակի մը մէջ կը գտնուի, և չի կրնար կազդուրել իր բարոյական և ֆիզիքական ոյժը։ Պարագայ մը՝ որ կրնայ մեծապէս ազդել զինուորին բարոյական կորովին վրայ։ Եթէ ըսե՛նք որ կացութիւնը կրնայ փոխուիլ մէկ կողմին դէպ ի նահանջ դիմելովը, ասիկա ալ կարելի չէ, որովհետեւ միւս կողմը թշնամիին ետ քաշուիլը տեսնելուն պէս՝ յանկարծ ետեւէն պիտի վազէ։ Յարձակողականը միայն կրնայ երկու կողմերուն ալ բաղձացած լուծումը առաջ բերել, բայց, ինչպէս որ քանի մը օրէ ի վեր կը կրկնենք, Մանչուրիոյ կլիմային ներկայ վիճակը կը դժուարացնէ զինուորական շարժումները։ Կռուելու ժամանակ պատսպարաններ գտնելը և քարի պէս կարծրացած գետիններուն վրայ զինուորներուն դիւերային հանգիստ գըտնելը ո՛չ միայն անկարելի է, այլ խըմելու ջուրն ալ կը պակսի։ Պէտք չէ անտեսել թէ մինչեւ 29 աստիճան ցուրտ կայ և դեռ ձիւն չկայ բնաւ։ Լնդհակառակն փոթորկալից քամիներ կը փչեն։ Ջուրը գետերուն սառոյցին մէջ պէտք է երթալ փնտռել, ինչ որ հիմա կարելի է գտնել Բանակներուն ներկայ կացութեան մէջ Շահոյի վրայ։ Բայց յարձակողականի ժամանակ, երբ բանակը աւելի ընդարձակ ճակատի վրայ կը յառաջանայ, զինուորներուն մէկ մասը Հունոյի հիւսիսային կողմը նեղ, անջուր, կամ սառած աղտոտ ջրանցի մը մօտ պիտի գտնուի, իսկ դաշտին արեւելքէն յառաջացող գունդերը բոլորովին ջուրի նեղութիւն պիտի կրեն։ Բանակ մը սակայն ամէն պարագայի մէջ ջուրի պէտք ունի, մեքենայի կը նմանի որ մի միայն ջուրով կրնայ դառնալ։ Այս պատճառաւ անկարելի է ո և է յարձակողական — ո՛ր կողմէն ալ ըլլայ — մինչեւ որ եղանակի փոփոխութիւն մը չվերցնէ ջուրին պէտքը կամ պակաս։ Ը՛դունելի չէ ա՛յն կարծիքը թէ Ճաբոնցիք կրնան յաջողակ յարձակումով մը թըշնամին ետ քշել Հունհոյի վրայէն և իրենք կրնան անցնիլ գետին վրայ, որովհետեւ ասով մեծ բան մը շահած չեն ըլլար — տասը քիլոմէթր միայն տեղ։ ։ ։ Ասոր համար ճակատամարտի մը վտանգը այլ առնելը չարժէր։ Այս միջոցիս երկու կողմերուն ալ եկած օգնական գունդերուն վիճակը բաւական չէ յարձակողականի մը կըրկնութեան և հետեւաբար ժամանակ մըն ալ պիտի դոնանք Շահոյի վրայ անշարժ դէպքերուն նիհար լուրերովը։

* * *

Պալթիկեան Նաւախումբին այն մասը որ ծ-վակալ Ֆոլքերզամի հրամատարութեան տակ կը գտնուի, այսօր Բորթ Սարտ հասաւ, Սուէզի ջրանցին հիւսիսային դուռը։ Միս, ջուր և թերեւս հանքածուխ պիտի առնեն։ Կառավարութեան կողմէ միջոցներ ձեռք առնուած են ռուսական նաւերուն ապահովութեան համար։ Մարտանաւերը խարիսխ պիտի չնետեն, և պահակ նաւեր պիտի պտտին անոնց բոլորտիքը։ Սրդէն անկարելի է ո և է ճաբոնական յարձակում այդ ջրանցին մէջ և Բորթ Սարտ և Սուէզի երկու նաւահանգիստներուն մէջ, որովհետեւ այդ ջրանցը չէզոքացած է բոլորովին, և միջազգային պայմանագրութիւններով արգիլուած են թշնամական գործողութիւններ անոր մէջ։ Բայց այն պահուն երբ ծովակալ Ֆոլքերզամ Սուէզը թողու և Կարմիր ծով մտնէ կրնայ վտանգներով ու արկածներով պաշարուիլ։ Միջերկրականի, Սուէզի ջրանցին և Կարմիր ծովուն մէջ կը վխտան Ճաբոնցի գործակալներ, որոնք մօտէն դիտողութեան կ'առնեն ռուսական մարտանաւերուն ճամբորդութիւնը։ Ճաբոնցիք ռուսական մարտանաւերուն յարձակելու համար անպատճառ թորփիլանաւեր գործածելու պէտք չունին, որովհետեւ զբօսանաւերու, չոգեմակոյկներու, և նոյն իսկ պարզ զեկաւոր մակոյկներու միջոցաւ կարելի է թորփիլ նետել։ Այս հնարքին Ռուսք իրենք ալ հետեւած են ատենօք և Ճաբոնցիք ալ գիտեն այս հնարքը, որովհետեւ 1895 Փետր.ին Վայհայվայի առջեւ չինական նաւատորմին մէկ մասը սասկով փըճացուցին Սովորական նաւերու միջոցաւ այսպիսի յարձակում մը յարձակողին համար սակայն խիստ վտանգաւոր է, որովհետեւ հարուածեալ նաւերուն հետ իրենք ալ ծովին տակը կ'երթան։ Բայց այս պարագային մէջ Ճաբոնցիք ա՛յնքան չատ ապացոյցներ տուին իրենց մոլեռանդ կատաղութեան և մահուան դէմ իրենց բացարձակ արհամարհանքին որ անոնց ենռանդը ոչինչ կրնայ պաղեցնել։ Այս առթիւ կը յիշուի անշուշտ ա՛յն Ճաբոնցի երիտասարդ ծովային սպան որ գաղտագողի թորփիլ մը մացուց Բորթ Արթուրի նաւահանգիստը, բայց Ռուսերուն էլեկտրական ցոլացուցիչներուն միջոցաւ երեւան գալով իր գծորային մեքենային հետ մէկտեղ փճացաւ ռուսական ռումբով մը։ Այս անյաջողութիւնը սակայն չյուսահատեցուց չալսափեցուց Ճաբոնցիները որովհետեւ գանուեցան ուրիշ չատ մը ծովային սպաներ, որոնք ուզեցին կրկնել կէս ճամբան մնացած փորձը, և Թոկոյի բացարձակ արգելքը միայն ետ կեցուց զանոնք իրենց յանդուգն խորհուրդէն։

ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՌՈՒՍՔ ՍՈՒԷԶԻ ՋՐԱՆՑԸ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՐՏԱՆԱՒԵՐԸ

ԲՈՐԹ ԱՐԹՈՒՐԻ ԸՆԴԴԻՄԱԿԻՆԸ

Միջերկրականի անգլ. ֆաւաղորդիները Սուէզի Ջրանցին չատ մօտը կը գտնուի, և չարունակ անթել հեռաւորագրով հաղորդակցութեան մէջ է Սուէզի անգլիական մարտանաւերուն հետ։ Բորթ Սարտի մէջ խիստ մեծ զորձի վրայ են Ճաբոնցի գործակալները։ Կ'ըսուի թէ Ատէնի բացերը Ճաբոնցիկան յաձանաւ մը կայ։

* * * Սուտայի ծովածոցին մէջ կարգապահութեան հակառակ վարուող քանի մը ռուս նաւաղներ, որոնք Պալթիկեան Նաւատորմին կը վերաբերին, վար դրուեցան հոն իբրեւ պատիժ երբ նաւախումբը Սուէզ մեկնեցաւ։ Ասոնք յատուկ չոգենաւով Ռուսիա պիտի փոխադրուին։

* * * Զօրավար Նոկի կը հեռագրէ Թօքիօ թէ Ռուսք Բչ. գիշեր հակայարձակում մը ըրին Ռիքվանչանի մօտ Ճաբոնական զօրքերուն վրայ, բայց ետ մղուեցան։ Լոնտոնէ կը հեռագրուի թէ Ճաբոնցիք չեն յաղողած իրենց վերջին յարձակումներուն մէջ. և յայտնի չէ թէ պիտի կրկնեն այլ եւս իրենց յարձակումները այս ամսուան մէջ։ Բազմաթիւ նոր Ճաբոնցի գունդեր Տալնիի նաւահանգիստը մտեր են Բորթ Արթուրի համար։ Ասոնք մեծ մասամբ չա՛ռ երիտասարդ են. պատանի են։ Թօքիոյէ խիստ հրամաններ ղրկուեցան Նոկիի կռուիլ շարունակ. որովհետեւ քաղաքական չատ մը պատճառներով պէտք է փութացնել բերդաքաղաքին գրաւումը։

* * * Բորթ Արթուրէն Վայհայվայ փախստականներ կը պատմեն թէ բերդաքաղաքին մէջ 20,000 հիւանդ և վիրաւոր կայ, և կանոնաւոր կռուողները հազիւ 2000ի կը հասնին եղեր։ Ուտելիքի նեղութիւն չեն կրեր. բայց զգեստի և ռազմամթերքի պակասը խիստ զգալի է։ Բայց զօրավար Նոկիի սպայակոյտին պետ զօրավար Քօտամա, յայտարարեց ամերիկացի թղթակիցի մը թէ Բորթ Արթուրի մէջ տակաւին 20,000 կռուող Ռուս կայ։ Ո՛րքան խոշոր ոուտ մըն է երկու հազար պահակազօրքին առասպելը. որովհետեւ ա՛յսքան մարդով անկարելի է պաշտպանել բերդի մը գիծերը, որուն ցամաքային և ծովային ճակատը առնուազն երեսուն քիլոմէթր լայն է։

* * * Սթանսարս Թօքիոյէ առնելով կը ծանուցանէ թէ ամէն օր կ'աւելնայ Ռուս դասալիք պահակազօրքերուն թիւը. որոնք կը պատմեն եղեր թէ պահակազօրքերուն մէջ վհատութիւն կը տիրէ։

* * * Շանկայէն ճամբայ ելաւ անցեալ օր անգլիական չոգենաւ մը 30,000 տուզինա տուփերով. միասով լեցուն. Բորթ Արթուր տանելու համար. բայց Ճաբոնցիք կէս ճամբան բռնեցին զայն։ Ռուսերէնական Պանքան էր որ այս չոգենաւը ճամբայ հանեց։ Նիւթական մասը 260,000 թալեր է։

* * * Ռուսերուն ծախուած անգլիական Թորփիլանաւածին մասին Տէյլի Էքսբրէս հետեւեալ նոր տեղեկութիւնները կուտայ.— Թէմիզ գետէն անցայտ եղող խորհրդաւոր Թորփիլանաւածին վարիչն էր անգլիացի մը։ Բոչ առուն, որ 500 անգլ. ոսկի գրաւի մը վրայ յանձն առաւ այդ նաւը Անգլիայէն ռուսական Լիպաւ նաւահանգիստը տանիլ։ Բոչ իսլանդացի ազնուական մըն է Լոտ Ֆըրմոյի եղբայրը և ժառանգը և իր արկածախնդիր կեանքով անուն հանած է Անգլիոյ մէջ։ Հարաւային Ամերիկայի կնճռոտ խնդիրներուն մէջ վտանգալից դերեր խաղացած է, նաեւ հիւսիսային Ամերիկայի բնիկներուն գործին և համարձակ ոչխարի ուրիշ ամէն գործերուն մէջ։ Մանթանա քաղաքին գերեզմանատան մէջ մահարձան մը կայ. որ կը ցուցնէ թէ Բոչ իբր թէ 1879ին Հնդիկներուն դէմ կռուի մը միջոցին ինկեր մեռեր է. Բոչ վարպետութիւն բանեցնելով յաջողեցաւ նաւը Ռուսերուն տանիլ։ Իմանալով որ ոստիկանութիւնը պիտի բռնէ Թորփիլանաւածը. քիչ մը պաքցիմատ միայն առաւ, և նաւաստիները հազիւ պէտք եղած հագուստները ունէին։ Ճամբան պատրիկ փոթորիկի մը բռնուեցան Հիւսիսային ծովուն մէջ և Բուրոնվէնի առջեւ ուռելիք և զգեստ դնեցին։ Հիւսիսային ծովուն ջրանցին արեւելեան ծայրը պահակատաները առանց ռումբի կրակ ըրին։ Բոչ իբրեւ զբօսանաւ կլլեցուց իր մարտանաւը. և անյայտ եղաւ աւելի խիստ միջոցներ ձեռք առնելէ առաջ.

* * * Լոյտ ընկերութեան առած մէկ տեղեկութեան նայելով, անգլիական ինվէրեսս չոգենաւը. որ Հոկտ. 14ին ուռելիք և ռազմամթերք բեռցած Բօրչա կ'երթար. Ռուսներուն կողմէ բռնուեր է, որոնք սակայն անոր վնասներ չեղան։

ԲՈՐԹ ԱՐԹՈՒՐ

ՊԱԼԹԻԿԵԱՆ ՆԱՒԱՏՈՐՄԸ

ՌՈՒՍԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԱՒԱԽՈՒՄԲ ՄԸ

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԶԲՕՍԱՆԱՒԵՐԸ

Ամերիկացի թղթակիցներուն վերջին տեղեկութիւնները դարձեալ խիստ անպատաստ են Բորթ Արթուրի ռուս պահակազօրքերուն կացութեան մասին։ Ստիպողաբար կամ ժամէ ժամ, վեհ. Զարէն հրամանի կը սպասուի Սթէօսէլի վերջին տեղեկագրին վրայ։

* * * Պալթիկեան նաւատորմին երկրորդ մասին Սուէզ հասնելուն վրայ հետեւեալ կարուցոր հեռագիրները կը կարդանք Նայէ Ֆրայէ Բրէսէի Նոյ. 25ի թիւին մէջ.—

Սիկոյի Վէյիսէի և Նավարին զրահաւորները, Սեամեկ. Սվեթլանա և Ալմաս յածանաւերը. ինչպէս նաեւ եօթը թորփիլանաւած և ինը փոխադրանաւեր նշ. օր կանոնի ժամը 8ին Բորթ Սարտ հասան. Սովորական ողջոյնները փոխանակուեցան։ Ռուս մարտանաւերուն երաժշտախումբերը բրիտանական ազգ. երգը նուագեցին, վասն զի անգլ. Ֆիւրիըս յածանաւը նաւահանգիստը կը գտնուէր։ Մարտանաւերը 3000 թօնս թարմ ջուր. թարմ ուտեստեղէն առին, ինչպէս նաեւ չոր խոտ մարտանաւերուն մէջ գտնուած մորթուելիք կենդանիներուն համար։ Յամաքէն ածուխ պիտի չկրնան առնել։ Մեծ ուշադրութիւն առաջ բերած է սա՛ պարագան թէ ռուսական մարտանաւերուն հանդէպ չատ քիչ առաջ իսկոյն ջրանցին մէջէն Սուէզի ուղղութեամբ անհետ եղան երեք զբօսանաւեր. որոնք Ֆլորէնթինա. Կասարինա և Էմբրոյս անուններու կը կրէին։ Ցոյց տրուած արձանագրութեան նայելով՝ Ֆլորէնթինա կը վերաբերի Վիթալ կոմսին. Կասարինայի տէրը յայտնի չէ եղած. իսկ Էմբրոյսն ալ Անգլիոյ Բարլամէնթին անդամ Քրիսթոֆըր Ֆրր'էրի կը վերաբերի եղեր։

* * * Նաւախումբին հրամատար ծովակալ Ֆոլքերզամ կը յայտարարէ թէ Սուտայի ծովածոցին մէջ քանի մը ռուս նաւապետներ միայն գինով վիճակի մէջ գտնուեցան՝ որոնք իրենց նաւերուն մէջ առնուեցան և պիտի պատժուին։ Բայց ոչ մեռնող կայ ոչ վիրաւորուող և ոչ ալ դասալիք։

* * * Նոր տեղեկութեանց նայելով, Բորթ Սահէն անհետ եղող զբօսանաւերը մասնաւոր առաքելու կողմէ վարձուեր են, բայց յայտնի չէ թէ անգլիացի են թէ օտարական։ Զբօսանաւերէն մին իբր թէ Հնդկաստան պիտի երթայ եղեր։ Էմբրոյս հինգ օր առաջ Սաֆայի առջեւ էր, և անկէց գացած էր Բորթ Սարտ։

* * * Նովոյէ Վրէմիա կ'ըսէ թէ Ռուսիա երրորդ նաւախումբ մըն ալ պիտի պատրաստէ Ծ. Արեւելքի համար, որովհետեւ կը վախցուի թէ Պալթիկեան նաւատորմը՝ նոյն իսկ յաղթական եղնելու պարագային՝ ի վիճակի պիտի չըլլայ երկար ատեն ծովուն տէրը ըլլալու, քանի որ նաւամարտէն ետքը ուղղակի Վլատիվոսթոք պիտի երթայ. եթէ սակայն իրմէ բան մը մնայ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԾՈՎԱԿԱԼ ՏԷ ՔՆԷՕՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

ԲԵՐԼԻՆ. Նոյ. 26. - Զօր. Բուրօքաթքին կը ծանուցանէ Զարին թէ նոյն օրը Զօր. Սթէօսէլէն հեռագիր մը ստացած է ծանուցանող թէ Ճաբոնցիք Նոյ. 21ին յարձակում մը փորձեցին բայց ետ մղուեցան։

—Ռուս գործակալութիւնը հետեւեալը կը հեռագրէ Մուքտէնէն.— Բորթ Արթուրը պաշարող քանի մը Ճաբոնական մարտանաւերը. ինչպէս կ'ըսեն մեկնեցան Սագէպօ. Նորոգուելու համար։ Ճաբոնէն հասած նոր զօրքերը բերդաքաղաք ղրկուեցան։

ԼՈՆՏՈՆ.— Ռիւթեր Զիֆուէն կը հեռագրէ.— Զօր. Նոկի. Թոքիոյի Ը. գն. Սպայակոյտին հրահանգին վրայ ընդհ. յարձակում մը սկսաւ առնորինակ սաստկութեամբ։ Ճաբոնցիք կը յարձակին Երլուունկշանի և Իշանի ամրոցներուն վրայ որոնք մասամբ քանդուած են։ Կորուստները մեծ են։ Ճաբոնցիք յաջողութիւններ կ'ունենան։ Բերդաքաղաքին թնդանօթները լռած են։ Կը կարծուի թէ ռազմանիթի պակասէ առաջ եկած է այս լռութիւնը։

—Թոքիոյէ Սթանսարսի թղթակիցը կը հեռագրէ թէ Ճաբոնական թորփիլանաւերու տորմիլիկ մը դէպի հարաւ գնաց. անծանօթ նպատակի մը համար։

ԲԵՐԼԻՆԻ.— Զարին գրասենեակներու գերագոյն ատեանը օրինաւորապէս գրաւեալ հռչակեց անգլիական Շեյրօն չոգենաւը։

ՍԻՐԻՋ.— Ռուս նաւաբաժինը, առանց միջադէպի անցնելով Ջրանցէն հոս հասաւ։

ԲԱՐԻՋ.— Երեսփ. Ժողովին մէջ Մ. Քոնպ յայտարարեց թէ Ֆրանսայի թեռարկութիւնը բնաւ կախում չունի Պապէն. Սպագային վնասներ պիտի կրենք եթէ Պապը հակառակի մնայ, բայց չեռնանք թէ մեր բանակին ուժին է որ կը պարտինք մեր ազդեցութիւնը Մ. Տէլքասէ յայտնեց թէ Ֆրանսա ընդունած է Ամերիկայի հրաւէրը նոր դեսպանախորհուրդին համար։ Ժողովը վաւերացուց Արտքին գործոց ելմտացոյցը։ Այս միջոցիս Մ. Տէլքասէ յայտարարեց թէ Ռուսիա հետ մեր զինակցութիւնը բնաւ օդտակար եղած չէր։ Ներկայ Պատերազմէն աւելի լաւագոյն առիթ մը չունենանք յայտնելու համար այն նաւատարութիւնը որով կցուած ենք այն դաշինքին որ կը պահպանէ երկու ազգերուն Ծայրոյն շահերը։ (Ծափեր)։

ԲԱՐԻԶԻ ՊՈՐՍԱՆ

BOURSE DE PARIS

26 Նոյեմբեր 1904

Ֆրանս. 3% Français	98 32
Բէժի (Tab. Turcs)	359 —
Սամ. Միացեալ (R. Nv. Unif.)	88 12
Դրկաթուղի (Lois Turcs)	129 25
Ճանգ Օթթ. (Banque Ott.)	596 —
Տրանսվալ (Transvaal)	112 —

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԷՆ

ԿԻԼԻԿԻՈՅ ՇՆՈՐՀԱՁԱՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Տ. Տ. ՍԱՀԱԿ Բ.

ՊՕԼՍՈՅ ՄԷՋ

ՄԱՅՐԱՎԱՆՔՈՒՆ ՇՈՒՈՒԹԻՒՆԸ

Երախտագիտութեամբ և անուշ բերկրութեամբ պատիւ ունինք ծանուցանել թէ, Մեծ-Եպարքոս Բարձր. Ցէրիտ փաշա բարեհաճած է հեռագրաւ հրահանգ տալ Ստամբոյի կուսակալ Վեհմ. Պահրի փաշայի որպէս զի մասնագէտ քննիչներ ղրկելով Սիս, մանրամասնօրէն քննել տայ Մայրավանքին նորոգելի կէտերը և ծախքերու գնահատութիւնով մէկտեղ կատարուելիք նորոգութիւններուն յատակագիծն ու ծրագիրը պատրաստել տալով, փութով ղրկէ Մայրաքաղաք, որպէս զի անմիջապէս սկսին նորոգութիւնները։

Օսմ. Մեծազօր Կառավարութեան՝ Կիլիկիոյ Ս. Աթոռին հանդէպ առաջադրեալ այս հայրական հոգածութիւնը անգամ մը ևս կը շեշտէ Ն. Կայս. Վեհափառութեան թանկագին բարեհաճութիւնը Իր հաւատարիմ Հայ հպատակներուն նկատմամբ։

Իրարու յաջորդող այս ուրախալի լուրերը պարագ կը դնեն բոլոր Հայ ժողովրդեան վրայ սրտեռանդն մաղթանքներով կրկնել իրենց ամէնօրեայ աղօթքը Վեհ. Սուլթանին արեւշատութեան համար։

ՎԵՐՋԻՆ ՔԱՐՈԶ

Կիլիկիոյ Տ. Սահակ Կաթողիկոսը. երէկ վերջին անգամ ըլլալով իջաւ Մայր Եկեղեցի և նախագահեց արարողութեանց։

Հակառակ անձրեւին և օդին աննպաստութեան. Դումգաքուի և շրջակայ թաղերէն այրերու և կիներու խուռն բազմութիւն մը մինչեւ դուռը լեցուցած էր Որդւոց Որոտման տաճարը. վերջին քարոզը ունկնդրելու և Հայրապետական օրհնութիւնները ստանալու համար։

Ճաշու Գիրքէն ետք, Ս. Կաթողիկոսը բեմ առաջնորդուելով խօսեցաւ հետեւեալ քարոզը.

«Այսօր երկրորդ կիրակին է այն կիրակին երբ իրեւ վերջին խօսք կը կարծէի ըսել ձեզ՝ Պոլսէն մեկնելուս առթիւ։ Եթէ մինչեւ հիմա մեկնած ըլլայի թերեւս այսօր տեղս հասած ըլլայի։ Բայց այս յապաղումը կը շեշտէ սա՝ պարագան թէ մարդուս խորհուրդները որքան զաղիտալիուն են և միայն Աստուծոյ խորհուրդները իմաստուն և սուրբ են։

«Մենք, սիրելի ժողովուրդ, կը խորհինք շատ մը բաներ երբեմն և կը կարծենք թէ ճշմարիտը և օգտակարը խորհած ենք. բայց անոնք շատ անգամ կը գործադրուին և դժբաղդ կ'ըլլանք մենք. բայց Աստուած որ կ'ուզէ մարդոց սիրտը և ուղղութիւն կուտայ անոնց խորհուրդներուն. մեզ զերծ կը կացուցանէ անոնցմէ։ Ահա այն ատեն կը հաւատանք թէ այդ Աստուծոյ կամքն է։

«Մարդարէն կ'ըսէ թէ խորհրդականները թող չպարծենան իրենց խորհուրդներովը. հզօրը իր ուժովը և իմաստունը իր իմաստութեամբը։ Մեր միակ պարծանքը և իմաստութիւնը «պարծիլ ի Տէր»ն է, այսինքն Աստուծմով պարծիլ։

«Առանց այդ հաւատքին և յոյսին, մարդկութեան խորհուրդը կը տկարանայ և հանճարը չինչ կը դառնայ։ Աստուծոյ խորհուրդները միայն ճշմարիտ են և իմաստութեան տէրը Աստուած է և Ան է որ զայն մեզի կը շնորհէ։

«Ի՞նչ է մարդուն գլխաւոր բաղձանքը։

«Առհասարակ մարդուն ընդհանուր բաղձանքները վերլուծեցէք և պիտի տեսնէք թէ՝ մարկութիւնը տիւ և գիշեր մեծութեան, ճոխութեան հասնելու և դիրակեաց ու հանգստաւէտ կեանքի մը կը ցանկայ։ Սակայն, ինչպէս ըսի, եթէ մեծութեան մը մէջ Աստուծոյ կամքը չկայ, եթէ մարդուս ունեցած իմաստութեան մէջ Աստուծոյ մատը գոյութիւն չունի, ատիկա ուռայնութիւն է։ Այդ մեծութիւնը չի կրնար բերել այն բաղձացուած երջանկութիւնը և մարդը ընդունայն պիտի փնտռէ երջանիկ, բաղդաւոր և հանգիստ կեանք մը ունենալ։

«Ե՞ զարմանալի թող չթուի ձեզի մարդ առ հասարակ միւնոյն բաղձանքը ունին, ըլլայ անիկայ քաղաքացի կամ չինական։ Քրիստոսի աշակերտները պարզ ձկնորսներ էին որոնք կեանքի մեծութիւնը չէին գիտեր և Գալիլիացւոց ռամիկ դասակարգէն անկիրթ մարդիկ էին։ Բոկոտն կը պտտէին։ Բայց անոնք տեսնելով հանդերձ թէ իրենց Վարդապետը գլուխը հանգչեցնելիք տեղ մը չունի և թէ Վարդապետը միայն ճշմարտութիւնը կը քարոզէ. դարձեալ անոնց սիրտերն ու հոգիները կը տապկուէին՝ մեծութեան իղձով։ Կը տեսնային որ իւնց Վարդապետը մարդոց բաղդաւորութեան և երջանկութեան համար կը քարոզէր, հրաշքներ կը գործէր. հիւանդներ կը բժշկէր. այդ անկիրթ և անուս Գալիլիացիները իրենց մէջ վէճ կը յարուցանէին թէ ո՛վ է իրենց մէջ մեծը. «Եւ եմուտ ի նոսա խորհուրդ թէ ո՛վ իցէ մեծ ի նոցանէ»։ Այդ ձկնորսները. խայրեցիները ի՞նչ մեծութիւն կը փնտռեն իրենց մէջ. քանի որ նոյն ինքն Նազովրեցին իրենց մէջ ունէին։ Առաքեալները աշխարհի մէջ մեծութիւն կը փնտռէին, և Յիսուս հասկցաւ որ անոնք իբրեւ տկար մարդիկ՝ ընդհանուր մարդոց մեծութեան մարմաջէն բռնուած են։ Այն ատեն Յիսուս բերաւ մանուկ մը. կանչեցուց անոնց մէջ և ըսաւ. «Ո՛վ որ այս մանուկը կ'ընդունի զիս կ'ընդունի»։ Եթէ կ'ուզէք մեծ ըլլալ. պէտք է որ դուք ալ մանուկներուն նմանիք։ Առով Քրիստոս ճշմարիտ մեծութեան օրինակը տուաւ քրիստոնէութեան։ Ո՛վ որ կ'ուզէ մեծ ըլլալ. պէտք է օգնէ իր նմաններուն և պաշտպանէ տկարները. ատելութիւն ունենալու չէ, իր ընկերը վարկաբեկ ընելու չէ և իր յաջողութիւնը ուրիշներու նուաստացման մէջ փնտռելու չէ։ Թող որ մակդիրները և յորջորջումները մարդուս մեծութիւնը չեն երաշխաւորեր։ Այլ մարդուն մէջ ըլլալու է պարզմտութիւն, անմեղութիւն և միւնոյն ատեն բոլոր հոգւովը նուիրուած ըլլալու է Աստուծոյ։ Քրիստոսի հրաշքները չեղան իրեն փառք որքան Այը որ նպատակ ունէր մարդկութեան օգուտը։ Այդ եղաւ Քրիստոսի փառքը, և մենք պէտք է անով պարծինք։

«Ի՞նչպէս պէտք է մեծ ըլլալ. սիրելի ժողովուրդ։ Շատեր կը կարծեն թէ իրենց նմանները զրկելով, բամբասելով, մեծութեան և փառքի ճամբուն մէջ եղած պիտի ըլլան։ Այդ կերպերը մարդս մեծ չեն ըներ. որովհետեւ ատոնք օրհնութիւն չունին Աստուծմէ. այլ անէծք միայն։ Փառքին ու պատիւին՝ ընկերին պատիւը ոտնակոխ ընելով չհասնիր մարդ. որովհետեւ առանց երկնային օրհնութեան ամենայն ինչ ունայնութիւն է։

«Իսկ մենք որ սիրելի ժողովուրդ, մեծութեան կը հետամտինք. պէտք է գիտցած ըլլանք որ այդ հետապնդումները. մեզի բարոյապէս երջանիկ կեանք մը պատրաստելու համար օգտակար չպիտի ըլլան։ Դաւիթ Հրէից չըսաւ թէ իմ աթոռս իմ երջանկութիւնն է. չըսաւ թէ՝ ես որ թշնամիներուս յաղթեցի իմ ժողովրդեանս փառքն է ու պատիւը։ Այլ ըսաւ. «Երանեալ է այր որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարչտաց. ի ճանապարհի մեղաւորաց նա ո՛չ եկաց և յաթոռս ժանտից ոչ նստաւ»։ Այսինքն, երջանիկ է այն անձը որ մեղաւորներու գացած ճամբէն չերթար և մեղաւորներու գործով իր ձեռքերը չաղտոտեր։

«Սիրելի ժողովուրդ. հաւատացէ՛ք որ աշխարհի մեծութիւնը մեզի համար երջանկութիւն չէ, և իմաստութիւնը փառք ու պատիւ չբերեր, այլ մարգարէն կ'ըսէ. «Երջա՛նիկ ըլլալու համար ո՛չ թէ իբրեւ իմաստուն, այլ իբրեւ հեղ և հաւատացեալ ապրելու է։ Երջանիկ կրնանք ըլլալ նոյն իսկ աղքատութեան մէջ, եթէ մեղաւորին ճամբուն չենք հետեւիր։

«Ուրեմն ամփոփելով ըսելիքս. ըսեմ թէ եթէ կը փափաքիք իրապէս մեծ ըլլալու, պէտք չէ երբեք թերանք ձեր ընկերին ծառայելու և օգնելու գործին մէջ։ Հոգեւորականները և հարուստները չէ որ միայն օգնելու և բարերարելու են. նոյն իսկ աղքատն ալ կրնայ իր կարողութեան չափով օգնել իրմէ ալ աւելի զրկեալին։ Եթէ հանճար ունիք, տկարներու ճամբան լուսաւորեցէ՛ք. եթէ նիւթականը ունիք, տկարին, աղքատին օգնեցէ՛ք։ Անոնք նոյն իսկ որոնք օրական հացի կարօտ են, անոնք ալ կարող են։ Մեծ ըլլալ իրենց հարուստ ու ճոխ ընկերին պէս, աղքատութիւնը գոհութեամբ տանելով և իրենցմէ աւելի դժբաղդին օգնելով։ Մարգարէին ըսածին պէս պարտաւոր ենք մեր նմանակաց պատիւը չարատաւորել և անարգելութեան ճամբէ չերթալ, այն ատեն կ'ըլլանք մեծ քրիստոնեաներ և երջանիկ հաւատացեալներ։

«Սիրելի ժողովուրդ, արդէն մեծ բարովս ըսած եմ։ Պոլիս եկայ բեռս թեթեւցնելու։ Ցառաջ քան Պոլիս գալս իմ վիճակայնոց բաղձանքները միայն կը կազմէին իմ բեռս, որ սակայն շատ թեթեւ էր։ Երբ Պոլիս եկայ և տեսայ մերազնէից համակրանքը և անկէ աւելի սէրը և սէրն աւելի իրենց իղձերն ու բաղձանքները, այն ատեն տեսայ որ անոնք կը յուսան թէ ես իմ տկար ուժերովս այդչափ ակնկալութիւնները պիտի կարողանամ իրագործել։ Բեռս, պարտականութիւնս դարձ հրաժեշտի այցելութիւն պիտի տայ Պատրիարքարանի մէջ, Ս. Պատրիարք Հօր։

Ժամը 7ին Ն. Ս. Օծութիւն իր հետեւորդ վարդապետներով պիտի իջնէ Մայր Եկեղեցի. ուր բարեմաղթութիւններ պիտի ընէ Վեհ. Կայսեր կենաց համար։

Ժամը 7½ին Ն. Ս. Օծութիւն և իր հետեւորդները, շքեղ կառքերով պիտի մեկնին Ղալաթիոյ քարափը. ուրկէ պիտի նաւին Լոյսի Էլէքթրա շոգենաւը, որ ժամը 11ին պիտի մեկնի Պոլսոյ նաւահանգիստէն։

Զարմանալի զուգադիպութեամբ Ս. Կաթողիկոսը կը մեկնի այն շոգենաւով որ արդէն ասկէց առաջ Պատրիարքներ և Կաթողիկոսներ փոխադրած է։ Երուսաղէմի Տ. Յարութիւն Պատրիարքը Պոլսէն Երուսաղէմ տարած է, Մնդհ. Հայոց Հայրապետը Երուսաղէմէն նոյն շոգենաւը նստած է և Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսն ալ ընտրութենէն ետք, Երուսա,էմէն Մէրսին նոյն շոգենաւով գացած է և այս անգամ Պոլսէն Մէրսին փոխադրողը դարձեալ նոյն Էլէքթրա շոգենաւը կ'ըլլայ։

Ս. ՊԱՏՐԻԱՐՔԸ, առաջիկայ կիրակի Գալիֆեան Որբանոցի հաստատութեան տարեդարձին առթիւ Պատարագ պիտի մատուցանէ և մայրապետական սքեմ պիտի տայ Մարիամ և Աղաւնի երկու քոյրերուն։

ՖԼՈՐԻԴԻԼԼԷՆ հետեւեալը կը գրուի.— Ասկէ առաջ կազմուած մասնաւոր Ցանձնաժողով մը Թաղիս Ս. Վարդանանց Եկեղեցւոյն վերանորոգութեան համար հանգանակութիւն կատարած էր, բայց վերջերս Վսեմ. Զենոբ պէյ Մէրամէթեան իր անձնական ծախքով գիւղիս խարխուլ եկեղեցին նորոգել տուած ըլլալով՝ նոյն հանգանակուած դրամը Ս. Պատրիարք Հօր յանձնուած էր Թաղիս բարենպաստակ մէկ գործին յատկացուելու համար։ Այս անգամ նոյն գումարին վերայ գրեթէ կէսին չափ ալ եկեղեցւոյ մնուցկէն աւելցնելով եկեղեցւոյս պարտէզին յարակից Մ. Նիքոլոգի Տէլեանի սեփական 520 կանգուն գետինը գնուած և Պատրիարքարանի արտօնութեամբ Թաղ. Խորհրդոյ Ատենապետ Զենոբ պէյ Մէրամէթեանի վրայ մուվազաբեռն արձանագրուած և Ն. Վսեմութիւնն ալ հարկ եղած Մուվազալի Սէնէտը ստորագրելով՝ Խորհրդոյ յանձնած է։ Այս առթիւ իբր թաղեցի մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք նախ Ամեն. Ս. Պատրիարք Հօր. որ աջակցութիւնը չի խնայեր հանդէպ մեր Թաղին, և յետոյ Թաղ. Խորհրդոյ Պատ. անդամոց, որոնք ոգի ի բռին կ'աշխատին և ամէն Չանք ի գործ կը դնեն յօգուտ եկեղեցւոյն և վարժարանին։ Ցուսով ենք թէ Ս. Պատրիարքին շնորհիւ և Թաղ. Խորհրդոյ Չանքով. գնուած գետնոյն վրայ քիչ ատենէն չենք մը կը կառուցուի հասոյթը վարժարանիս յառաջդիմութեան յատկացուելու համար։

ՆԱՒԼԸ ԳԱԲՈՒԼԻՆ ասկէ առաջ հանրագրեր հաւաք էին նոր Թաղ. Խորհուրդի մը ընտրութեանը համար։ Միւս կողմէ տեղւոյն Թաղ. Խորհուրդն ալ գրով մը երկու հոգի ներկայացուցած էր իբր ընտրելի Խորհուրդէն պակաս անդամներուն տեղ։ Պատրիարքարանը այդ հանրագրերը և Թաղ. Խորհրդոյ գիրը նկատողութեան առնելէ առաջ. Պատ. Փոխանորդին յանձնեց որպէսզի քննէ այդ Թաղին Թաղ. Խորհուրդին խնդիրը և իր կարծիքը յայտնէ թէ պէ՞տք է նոր Թաղ. Խորհուրդ մը ընտրել թէ գոհանալ առժամայով մը։

ԳՈՒՄ ԳԱԲՈՒԻ աղքատախնամը շնորհակալութեամբ կը ծանուցանէ թէ բարեսէր անձնաւորութիւն մը, ինչպէս ուրիշ տարիներ, այս տարի ևս Պոլսոյ Էֆէնտի Ալպոյաճեանի ձեռամբ 15 օսմ. ոսկի նուիրած է իբր ածխագին։

ՆԵԱՆՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ կ'իմանանք թէ Իզմիրի վաճառականներէն Յովհ. էֆ. Փանոսեան նշանուած է Պաղտասար էֆ. Գասպարեանի աղջկան՝ Օր. Գայիանէի հետ։ Փանոսեան էֆ. առեւտր. հրապարակին վրայ ճանչցուած դէմք մըն է որ երկար տարիներ Մանչէսթրի և Եւրոպոյ ուրիշ առեւտր. կեդրոններուն մէջ ապրած ըլլալով. իր բնական ուշիմութեան և ազնուութեան կը միացնէ նաեւ մեծ փորձառութիւն մը և պատուաւոր անուն մը, որուն շնորհիւ նախանձելի դիրք մը գրաւած է հրապարակին վրայ։ Իսկ Օր. Գայիանէ Գասպարեան կը պատկանի Իզմիրի Հայ դաստիարակուած օրիորդներու դասակարգին, որուն մէջ արժանաւոր տեղ մը կը գրաւէ իր հոգիին ազնուութեամբը, խնամուած դաստիարակութեամբ և ընտանեկան յատկութիւններովը։ Այս բարեդէպ նշանաւոր առիթ մեր խնդակցութիւնը կը յայտնենք երկու խօսեցեալներուն և իրենց պարագաներուն։

ՄԱՆԶՈՒՄԷԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԲԱԺԻՆԸ

ԿՆՈՔՆՔ

Սարգիս էֆ. Գոչունեանի երրորդ զաւակը առջի առտու 14 նոյեմբեր մկրտուեցաւ Գումգաքուի Մայր Եկեղեցւոյ մէջ, կնքահայրութեամբ Միսաք էֆ. Գոչունեանի. (Բասիմ) և ձեռամբ Մայր Եկեղեցւոյ փոխ-աւագերէց Արժ. Տ. Միքայէլ քհնյ. Աչճեանի։ Նորածինը անուանուեցաւ ՍԻՐԱՐԴԻ։ Գոչունեան ընտանիքին ազգականներն ու հա՛կակիրները ներկայ էին մկրտութեան հանդէսին։

ՐԷՍՄԻ

ԹԷՎՃԻՇԱՔ

Իզմիրա Տէֆթէրը Խագանի մէմուրը իզզէթլու Զիվէր էֆէնտի է բիւթպէի Սանիյէ սընֆը սանիսի թէվֆիհ պույրուլմուշ տըր։

ՆԵՐՔԻՆ

ԵԼՄՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.— Ելմտական Բարձր Ցանձնաժողովը հրամայեց Թրղթատարական և Հեռագրական վերատեսչութեան, ծանուցանել ամէն կողմ որ. գաւառներէն ամէն չարթու Ցանձնաժողովին զրկուած հեռագիրները ո և է յապաղում չկրեն, հակառակ պարագային ծանր պատասխանատուութիւն կը ծագի։

*** Ելմտական նախարար Նազիթ փաշա քիչ մը ապաքինած ըլլալով իր տան մէջ կը զբաղի ելմտական գործերով։

ԹՈՒՐԲԻԼ ԵՒ ՌՈՒՍԻԱ. — Զարը մասնաւոր նամակով մը գահաժառանգին ծնունդը կը ծանուցանէ Վեհ. Սուլթանին։ Այս նամակը դեսպանատան կողմէ յանձնուեցաւ Բ. Դրան, Կայս. Պալատ մատուցուելու համար։

ԴԵՍՊԱՆՆԵՐԸ.—Հոլանտական դեսպան Տը Պիլանտ կոմս. որ Լահէ կը գտնուէր Շբ. օր Պոլիս դարձաւ։

*** Շուէյտ-Նորվեկեան դեսպան Մ. Պէք Ֆրից Շբ. օր Սթոքհոլմ մեկնեցաւ։

ՊՈՒԼԿԱՐ ԱՒԱԶԱԿՆԵՐԸ.— Դասուվայի պաշտօնաթերթը կը գրէ Հոկտ. 31ին Բրէչովայի մէկ գիւղին մօտ ընդհարում մը տեղի ունեցաւ։ Աւազակ մը սպանուեցաւ, իսկ միւսները փախան. կարգ մը ռազմանիւթեր և զէնքեր թողուով։

ԾԱՂԿԱՀՈՏԸ.—Անցեալ շաբթու Բերայի և Խասգիւղի մէջ ծաղկահոտ 15 հոգի մեռած են, որոնցմէ մէկը 56 տարու և միւսը 75։ Վիճակագրութիւններէ դիտուած է որ Հրեայ և Յոյն թաղերուն մէջ աւելի ճարակած է ախտը։ Այս առթիւ, նկատելով որ շատեր պատուաստուելէ կը վախնան, մինչ ընդհակառակը ան ոչ է ջնջին վնաս անգամ չի հասցնէր ո՛չ մեծերուն և ոչ պզտիկներուն, պաշտօնապէս կը ծանուցուի թէ, որոնք որ թէ՛ իրենց զաւակները և թէ զիրենք այդ չարաշուք հիւանդութենէն զերծ պահել կ'ուզեն, թող դիմեն Թաղապետական պաշտօնարանները, ուր մասնաւոր պաշտօնեաներ ձրիաբար կը պատուաստեն։

ՊՈՒԼԿԱՐԻԱ.—Սոպրանիէն շաբաթական նոր փոխառութեան պայմանագրին վիճաբանութիւնը։ Մ. Թէոտորօֆ դէմ խօսեցաւ ըսելով թէ թեթեւ պարտքերը 39 միլիոն ֆր. են. մինչ փոխառութիւնը 100 միլիոն։ Մնաց որ պարտքերը սովորական հասոյթներէն կարելի է գոցել և տեղական դրամատուններն են որ կ'օգտուին անոր տոկոսներէն։ Կառավարութիւնը մէկ խօսքով կը հաւանի անանկ ծախքերու. զոր կարելի է ընել ելմտացոյցին մէջ հետզհետէ մրցուելիք խնայողութիւններով։ Այսպէս կարելի է տարեկան 4 միլիոն ֆր.ի յաւելում մը ընել ելմտացոյցին վրայ, ներքին պէտքերուն համար և ոչ թէ փոխառութիւն կնքել, որ 30 տարի պիտի ծանրանայ ելմտացոյցին վրայ, 3,300,000 ֆր.ի ծախքով մը. տոկոսի համար։

ՀԱԼԷՊԻ նահանգին ճարտարագէտներէն Թումանեան էֆ. նոյն պաշտօնով Գոսովա փոխադրուեցաւ։

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԴԱՐՁԵԱԼ ԱՆՁՐԵՒ ԵՒ ՓՈԹՈՐԻԿ. — Առջի շաբթուան ուժգին մրրիկէն ետք. օդերը թէեւ ցուրտ, բայց հանդարտ էին։ Սակայն ուրբաթ առտու յանկարծ փոխուեցաւ։ Առջի գիշերուընէ արդէն առատ անձրեւ տեղացած էր և յաջորդ առտու սկսաւ հարաւային հովը փչել սաստկութեամբ։ Փոթորիկը դեռ կը տիրէ։ Այս պատճառաւ մանաւանդ Կղզիի և Գատըգիւղի շոգենաւերը շատ դժուարութեամբ և ժամերու տաժանելի ճամբորդութենէ մը ետք կը հասնին նաւամատոյց։ Անցեալ գիշեր կամուրջէն ժամը 11ին մեկնող շոգենաւը ժամը գիշերուան երկուքին Կղզի ժամանեց։ Մարմարայի մէջ ալեկոծութիւնը այնչափ ուժգին է որ Հարէմի և Սալաճըքի շոգենաւերը չեն երթեւեկեր։ Դումգաքուի, Եէնի-Գաքուի և ուրիշ ծովեզերքներու տուներուն մէջ քանանալ անկարելի դարձած է, և Եէնի-Գաքուի առջեւ գիպուած վառելափայտերու ահագին զանգուածը սրիւ ցրիւ եղած է ալիքներէն։ Փայտի վաճառականները դժուարաւ հաւաքել կուտան ջուրերէն քշուող փայտերը։ Միջերկրականի մէջ ալ սաստիկ փոթորիկ կը տիրէ. բայց արկածներու մասին լուր չկայ։ Շաբաթ օր Պոլսոյ վրայ տեղացած սաստիկ անձրեւէն ճամբաները անանցանելի դարձած էին, քանի մը խարխուլ տանիքներ չդիմացան, սարին վայրերու խանութները ողողուեցան և հեղեղին առաջահոսութենէն։ Պոլսոյ թրամուէյները ժամանակ մը չգնացին, իսկ թրամուէյ մըն ալ Աքսարայէն մինչեւ Կամուրջ 1½ ժամէն հասաւ։

*** Ուրբաթ գիշեր Սեւ ծովէն Պոլիս եկող հելլենական Բօլիխանեի շոգենաւը գնաց ինկաւ իտալական Ալեքսօ շոգենաւին վրայ. որ Բորուչէչմէի մօտերը ածուխ կառնէր։ Հելլէն շոգենաւը չկենալով իր ճամբան շարունակեց։ Այս ընդհարումէն Ալեքսօ թեթեւապէս վնասուեցաւ, բայց իրեն ածուխ առնող մասնունն կողէն ծակուեցաւ և քիչ ետք ընկղմեցաւ։ Նաւնաստիները ինքզինքնին իտալական շոգենաւը հաղիւ կրցան նետել։ Քիչ ետք Ալեքսօ ալ հոսանքէն բռնուելով սկսաւ քշուիլ իր հետ տանելով նաև առագաստանաւ մը որուն պարանը պատահմամբ անցած էր շոգենաւին խարիսխին։ Շոգենաւը մինչեւ Պալթա Լիմանի գնաց իր ինքնակոչ հետեւորդովը և հոն նաւապետը դարձուածք մը ընելով կեցուց և յետոյ վերադարձաւ Բուրուչէչմէի նաւահանգիստը առագաստանաւին հետ։

*** Հաճի Տաւուտի էլէնի շոգենաւը Հոդոսի մօտէն անցած ատեն խրեցաւ եղերքի խայտներուն վրայ և քանի մը կողմէն վնասուեցաւ։ Անձի կորուստ չկայ։ Ընկերութիւնը անմիջապէս նաւաձիգներ ղրկեց, որոնք էլէնիի ապրանքներն ու ճամբորդները առին և այժմ կ'աշխատին շոգենաւին աղատման։

*** Պէյքօզի և Սալը Քէօչկէ միջև ծովեզերքի մօտ հանքածուխ բեռցած մավունա մը գտնուեցաւ, որուն մէջ մարդ չկար։ Մավունան որ նաւամատոյց քաշուեցաւ, արկածի հանդիպած էր, ուստի քննութիւն բացուեցաւ մէջիններուն ի՛նչ ըլլալը ստուգելու համար։

ՀՐԴԵՀՆԵՐ. — Շաբաթ առտու, ժամը 12ի Սկիւտարի Սէլամսըզ Ճատէսի, հրդեհ ծագեցաւ առաղձավաճառ Ահմէտ էֆ.ի խանութէն և անմիջապէս տարածուելով այրեցաւ ամէնքը 3 տուն, 7 խանութ, ախոռ մը և գիշերապահի տնակ մը։ Այրածներուն մէջ կայ քրիստեան Յովհաննէսի փայտաշէն խանութը։ Հրդեհը եղած խանութը 200 ոսկիի և առաղձները 500 ոսկիի ապահովագրուած էին, որով հրձգութեան կասկածներ կան. հաւանարութիւնը քննութիւն մը բացաւ։

*** Նոյն առտու ժամը 3ին, հրդեհ ծագեցաւ նաեւ Վոսֆոր, Եէնի գիւղ, Ցունաց եկեղեցիին փողոցը փայտաշէն տունէ մը և բացի նոյն տունէն այրեցան նաեւ ակնավաճառ Հայ-Հռոմէական Քէչիչէի տունը և կազինոճի Լիզոի ապահովագրուած երկու տուներ։ Հրդեհը առաջ եկած է արկածով. ձուկ տապկած ատենին արձակուած կայծէ մը։ Նոյն տեղը, ժամը 6ին, անգլիահպատակ Տօքթ. Ճօն Բարսոյի տան վերնայարկէն ալ թէեւ հրդեհ ծագեցաւ բայց անմիջապէս մարեցին։

*** Հոկտ. 29ին, Արեւելեան Բուլկարիի մէջ, Եէնի-Զաղրայի Էսեապը գիւղէն հրդեհ ծագելով, ամբողջ գիւղը քանդ ու աւեր եղած է։ Բոցերը այնքան արագ տարածուած են որ գիւղացի կին մը իր երեք զաւկներով չկրնալով փախչիլ, ողջ ողջ այրած է։

ԳԻՇԵՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐ

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԲՈՒԲԻԶ, 27. — Պալթիկի երրորդ նաւաբաժինը տեսնուեցաւ Մանչի ծովին մէջ։ Երեք ռուս նաւեր Շէրպուրկ հասան։

—Վլատիվոսթոքէն կը հեռագրեն թէ ռուս թորպիլնաւ մը ական մը զարնուելով ընկղմեցաւ։

ԼՈՆՏՈՆ. — Լոնտոնի ճաքոնական դեսպանը ցաւ յայտնեց բրիտանական կառավարութեան, որ Պալթիկի ռուս նաւաբաժնին ածուխ բեռնալը դիւրացուցած էր։

ԲԱՐԻԶ.—Մուքթէնէ կը հեռագրեն թէ հակառակ այն Լրկնակի ապահովութիւններուն թէ մեծ ճակատամարտ մը տեղի չպիտի ունենայ առ ա՛ժմ, ընդհանուր բաղխում մը մօտալուտ է։

ԹԻՐԹՕՆ «ՄԱՆԶՈՒՍԷ»Ի 37

ԲՕՆՍՈՆ ՏԻՒ ԹԷՐԱՅԼ

ՌՕԳԱՆՊՕՂ

ԲԱՐԻԶԵԱՆ ՄԵԾ ՏՈՒԱՄ

ԹԱՐԳՄ.
ԺԻՐԱՑՐ ՇԻՐԱԿԱՑԻ

Ա. ՊԱՍ

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Ը.

ՊԱՌՈՆԻԿԸ

—Ա՛հ, վերջապէս կը սիրէ՛ք զայն, մրմռաց Սըր Ուիլերմս։

—Է՛հ, այո՛, կը սիրե՛մ զայն, կիրքով, կասաղութեամբ կը սիրեմ, պոռաց Պաքարա, կը սիրե՛մ ինչպէս պէտք է սիրեն էգ առիւծները անապատին մէջ։

Եւ Պաքարա շտկուեցաւ, հպարտ, սոսկալի, աչքերը փայլակնացայտ, շրթունքը սարսռուն, ռունգերը լայնցած։

—Պիտի չամուսնանա՛յ, պոռաց և պիտի սիրէ զիս, եթէ նոյն իսկ հարկ ըլլայ ոսոխուհիս դաշնակցիլ։

Վառարանին վրայ, ժամացոյցին քով, նրբաքանդակ պատեանի մը մէջ սիրուն դաշոյն մը կար, որուն շեղբը ոսկի և արծաթ թելերով քանդակուած էր։ Այս դաշոյնը ատենօք երիտասարդի մը էր որ ուզած էր ինքնասպան ըլլալ Պաքարայի համար և այս վերջինը ձեռքէն առած էր թեւը բռնելով և ըսելով.

—Բանի որ չար էք, ահա զինաթափ կ'ընեմ ձեզ։

Պաքարա թերեւս այնքան կարեւորութիւն չէր ընծայեր չգնահատուած սիրահարին կենաց, — վասն զի անիկա իր ունեցածին երեք քառորդ մասը կորսնցուցած էր,—որքան դաշոյնին որուն հաւնած էր և կ'ուզէր ունենալ։ Այն պահուն երբ մահուան սպառնալիք կ'ընէր Ֆէրնան Բօչէի հետ ամուսնանալիք կնոջը դէմ, Պաքարա խոյացաւ դաշոյնին վրայ, առաւ և ճօճեց զայրագին։

—Ա՛հ, ըսաւ Սըր Ուիլերմս Ալպիոնի ճշմարիտ զաւկի մը պաղարիւնութիւնովը, չա՛տ հիանալի պիտի ըլլայիք եթէ ոգերեղութիւն մը ներկայացնէիք այդպէս, սիրեցեալ տիկին։

Հեգնական խօսք մը բարկացած մարդու մը երեսին նետուած գաւաթ մը պաղ ջուրի ապաւորութիւնը կ'ընէ։ Սըր Ուիլերմսի խօսքերը, բարակ անձրեւին պէս, որ սաստիկ հովը կ'իջեցնէ, — ինչպէս կ'ըսէ առածը —, Պաքարայի հիանալի ցասումը մարեցին և անոր գերագրգռութիւնը տրտում և յանկարծական վհատութեան մը փոխեցին։ Դաշոյնը խուսափեցաւ ձեռքէն և Պաքարա սկսաւ ազու մը պէս դողալ։

—Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, մրմռաց խղդուկ ձայնով մը, ուր հեծկլտանքներ պահուած էին։

—Սիրելիս, շարունակեց Սըր Ուիլերմս միշտ անկարեկիր, զէշ լուր մը ասելու, բայց միեւնոյն ատեն ծառայութիւններս մատուցանելու եկած եմ։

—Ի՞նչ ըսել կ'ուզէք, հարցուց Պաքարա յոսի սարսուռով մը տոգորուած։

—Աղէկ նայեցէք երեսս, շարունակեց Սըր Ուիլերմս չրթունքին վրայ ցոյց տալով այն դիւային ժպիտը, որ իր ահաւորապէս չար իմացականութիւնը կը յայտնէր, չէ՞ք կարծեր որ կրնամ օգտակար դաշնակից մը ըլլալ։

—Դո՞ւք, դաշնակի՞ց մը։

—Ինչո՞ւ չէ։

—Դո՞ւք, պիտի ծառայէ՞ք ինծի։

—Կարելի է, սիրելիս։

—Բայց իրո՞ք ինչ...։ Ինչո՞ւ, ի՞նչ նպատակաւ։

—Ա՛հ, ըսաւ Սըր Ուիլերմս, յայտնի է որ նպատակ մը և շահ մը ունիմ...։ Եթէ անանկ չըլլար...։

Զաւարտեց։ Դուռը բացուեցաւ և Ֆրանն ներս մտաւ, այցքարտ մը ձեռքը։ Պաքարա մեքենաբար առաւ և աչքէ անցուց։ Այցքարտին վրայ սա անունը կար.—

Է. ՏԸ ՊՕԲՐԷՕ
Դրասենեկի պետ Արտաքին գործոց պատասխանատուին մէջ

—Զեմ ճանչնար սա մարդը, բաւ այցքարտը նետելով տենդային անհամբերութեամբ մը։ Հոս չէ՛ ըսէ։

Այն օրը Պաքարա դեսպան մը իսկ պիտի չընդունէր։ Բայց Սըր Ուիլերմս առաւ այցքարտը, աչքէ անցուց և ցնցուեցաւ։

—Պէտք է ընդունիլ, ըսաւ, պէ՛տք է։

Եւ խօսքը, տիրական շեշտով մը, Ֆրանի ուղղելով,

—Տան վերակենի չափ սպասցուցէք հիւրասենեկին մէջ, ըսաւ։

Ֆրանի հասկցաւ որ այս մարդը կատութեան տէրն էր և հնազանդեցաւ։ Այն ատեն Սըր Ուիլերմս նայեցաւ Պաքարայի երեսը, որ ապշեր մնացեր էր, և ըսաւ.

—Պ. տը Պօբրէօ աղջիկ մը ունի որուն անունը Հէրմին է։

Պաքարա ճիչ մը արձակեց և յիշեց այն անունը զոր իր առջեւ արտասանած էր Սէն Լուի փողոցին դռնապանուհին։

—Ահ, ըսաւ, Ֆէրնանի նշանածը ըլլալու է։

—Այո՛, պատասխանեց Պառոնիկը հանդարտօրէն, և դուք հիմա անոր ներցուն պիտի տանէք։

Եւ որովհետեւ Պաքարա կը սկսէր զայրոյթէն դողալ,

—Պէտք է ընդունիլ այս մարդը, ըսաւ Սըր Ուիլերմս։

—Բայց ի՞նչ կ'ուզէ։ Ի՞նչ ընելու կուգայ։

—Դարշելիքներ մը, անանուն սակարկութիւն մը առաջարկելու կուգայ։ Ի՞նչ որ ալ ըլլայ, մի՛ վռնէք։ Համբերութեամբ մտիկ ըրէք, յետոյ վաղուան յետաձգեցէք։ Եթէ կը տեսնենք։

Եւ Սըր Ուիլերմս զանգակին կոմը գնաց և ուժգնապէս հնչեցուց։

—Ներս բերէք Պ. տը Պօբրէօն, ըսաւ Ֆրանի։

Յետոյ վազեց զարդասենեակը։ դրան վարագոյրը իջեցուց, մատը բերանին վրայ գնելով, հասկցնելու համար Պաքարայի թէ կ'ուզէր տեսնել առանց տեսնուելու, լսել առանց իր ներկայութիւնը յայտնելու, և այն պահուն երբ վարագոյրին ետեւ անյայտ կ'ըլլար, ցած ձայնով սա խօսքերը ըսաւ, սոսկալի վերջնաբանի մը պէս.

—Մի՛ մերժէք..., մի՛ բարկանաք..., ապա թէ ոչ ուր օրէն Ֆէրնան կ'ամուսնանայ...։

Պաքարա քանի մը վայրկեան առանձին մնաց, յետոյ գրասենեկի պեսը ներս մտաւ։ Պաքարայի դէմն և յուզումը անցած էին։ Շրթունքը կը ժըպտէր, ճակատը պայծառ էր և կերպարանքը հանդարտ։ Երբ Պ. տը Պօբրէօ երեւցաւ, Պաքարա վերստացած էր իր անփոյթ երեւոյթը ննջասենեակին վրայ և կրցաւ հանդարտօրէն քննել գրասենեկի պետին կապոյտ ակնոցը, կարմիր դէմքը, լայն փորը և կարճ ու ճոպան սրունքները։

(Շարունակելի)

Տէր եւ Տնօրէն
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱԼՍՏԵՐԵԱՆ

ՈՍԿԻ ՄԻՋԱԶԳ. ԲԱՐԻԶ 1900

EXPOSITION UNIVERSELLE INTERNATIONALE 1900 — CARMEL — FRANÇAISE

2

ՍՐԵՒԵԼԵԱՆ-ՔԱՐՄԷԼ ԸՆԿ.

ԱՆԱՐԱՏ ԳԻՆԻՆԵՐ ԵՒ ՔՕՆԵԱՔՆԵՐ

ՌԻՇՇՕՆ ԼԸ-ՍԻՕՆԻ (Պաղեստին) մեծ մառանցներէն

ԱՄԷՆ ՏԵՂ ԿԸ ԾԱԽՍԻ. — ԳՐԱՍԵՆԵԱԿ ԵՒ ՄԹԵՐԱՆՈՑ

Ղալաթիոյ Քարափը, Սիրք Ֆրանսէզ, թիւ 145—147

Բարիզի բժշկ. կաճառին բրոֆէսէօր Ժ. ԲՈՒՇԷԻ
Գոռտոյի գիտական կաճառէն Բրոֆ. ԿԱՅՕՆԻ
Համպուրկի քաղաքապետութեան քիմիագէտ Մ. Է. ՆՕՔԻ և այլ նշանաւոր գիտուններու վկայութեամբ,
ՄԵՐ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ

ԲՆԱԿԱՆ, ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ԴԱՐՄԱՆՈՂ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԸՆԵԼ ՎԱՃԱՌԱՆԻՇԻՆ,

SOCIETE CARMEL-ORIENTAL — CONSTANTINOPLE

ՎԱՃԱՌԱՆԻՇ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԺԱՄԱՑՈՒՑԻՉ, ԼԱՄԲԱՐԻ, ՎԱՌԱՐԱՆԻ, ՄԸՍԻ ՄԵՔԵՆԱՑԻ, ՇԻՇԵՂԻՆԱՑ ԵՒ ԱՑԼ ԶԱՆԱԶԱՆ ՎԱՃԱՌՈՑ, ԵՒՆ.

ՀԻՄՆԵԱԼ 1870 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Ա. ՍԹԵՓԱՆԻԿ Ս. ՍԱՔԷՔԻՍ

Կ. Պոլիս, Ֆինճանճըլար, Ամերիկեան խան թիւ 21



Մեր հաւատարիմ ու միր գործունէութեամբ յառաջ տարած երեսունհինգ տարուայ սոյն վաճառատունը այսօր, ինչպէս ի Թուրքիա, նմանապէս և յԱմերիկա՝ իր ստացած պատուոյրներ անուն, ինչ, բաղդն ունեցաւ Թուրքիոյ, Ռումանիոյ և Պուլկարիոյ համար՝ միակ ներկայացուցիչն ըլլալ՝ Ամերիկեան ժամացոյցի հռչակաւոր տան՝

NEW ENGLAND WATCH Cie՝

որուն համբաւը տարածուած է արդէն բովանդակ Ամերիկայի և Եւրոպայի երկիրներուն մէջ։ Միեւնոյն վստահութիւնն ու պատիւը չտած ըլլալով նաև Ամերիկեան լամբարի և վառարանի են. ֆապրիգաներու առջեւ, մեծ յաջողակութեամբ կրցած ենք նաև անոնց միակ ներկայացուցիչն ըլլալ Թուրքիոյ մէջ՝ կեդրոնատեղի ընտրած ըլլալով միայն ի Կ. Պոլիս։



Վաճառատանս մէջ ամէն ժամանակ պատրաստ կը գտնուին մեծ քանակութեամբ ոսկի, արծաթ և մետալեայ ժամացոյցներ արական և իգական սեռին յատուկ՝ խիստ ճաշակաւոր և վերջին նորաձեւութեամբ. ինչպէս նաև պիւռօյի և պատի ժամացոյցներ։

Կը գտնուին նաև Ամերիկեան ամենավերջին նորաձեւութեամբ ու ամէն տեսակէ, շիշով և առանց շիշի (քարիւղի) լամբարներ, մեծ սրահներու, սենեակներու և գրասենեակներու յատուկ, նաև պիւռօյի և պատի յատուկ։ Նոյնպէս նաև քարիւղի, փայտի և հանքածուխի վառարաններ՝ սրահներու և սենեակներու յատուկ. ևն. ևն.։

Թէ՛ Տեղական և թէ՛ Գաւառներու յանձնարարութիւնք կ'ընդունուին ու կը կատարուին փութով և ամենայն ճշտութեամբ։

Սոյն վաճառատունն հիմնուելէն մինչեւ ցայսօր ամենայն ուղղութեամբ շարունակած ըլլալով, մեզ համար միմիայն նպատակակէտ ընտրած ենք «մեր չափը յաճախորդաց օգտին մէջ փնտռել»։



Եւ այսպէս երկար ժամանակամիջոցի մը մէջ, վերջապէս մեր ջանքերն առանց ի զուր վատնած ըլլալու՝ կարողացած ենք մեծ յաջողակութեամբ Պատ. յաճախորդաց համակրանքը շահիլ։ Պարծանք է մեզ ըսել թէ հանրութիւնն ամենայն գոհունակութեամբ՝ առանց ոև է տեսակէտով խաբուած ըլլալու՝ օգտուած է սոյն Ամերիկեան վաճառատունէն։

Մեծ յոյս ունինք թէ սոյն վաճառատան մէջ գտնուած ամէն ապրանք, իր տեսակներուն մէջ տոկունութեամբ, գեղեցկութեամբ, ճաշակով ու արժեքով միանգամայն պիտի սիրուին ու փնտռուին բոլոր անոնց՝ որոնք միանգամ նոյն իսկ տեսած են կամ լսած անոր տեսակն ու հմարաւը։

Միակ այցելութիւն մը ինքնին կատարեալ փորձ մը պիտի ըլլայ պատ. յաճախորդաց համար, որոնք անտեսագիտօրէն պիտի զգան նոյն ապրանաց կարեւորութիւնն՝ եթէ բարեհաճին փնտռել Ամերիկեան այս վաճառատունն, որ միակ կեդրոնատեղին է Կ. Պոլսոյ մէջ զուտ Ամերիկեան վաճառաց։

Ամերիկեան լամբարի շիշերուն մէկ երկու տեսակին գիներն են, Նօ 8 շիշ 13 ղրշ. տուզինան. Նօ 14 շիշ՝ 18 ղրուշ տուզինան։ 50—1

ԳԱԼԳԱՆ

ՍՕՖԵՍՏԱ ՄԻԼԼԻ ՍԻԿՈՒՐԹԱ ԾԻՐՔԷԹԻ

ՍԵՐՄԱՅԷ, ԻՀԼԻԹՅԱԹ, ԹԷՄԻՆԱԹ ՖՐ. 7500000

1899ռ մէրի իւլ իւթրա էմիւք սիկուրթասը պէտէլի ֆրդ. 19,534,276
» » եանկէն » » » 460,267,203
» » » » բրիմի » 1,433,965

Էմիւլ իւլէրինի վէ չօճուգլար իլէնի միւթեամիլ չէրթիթ իւլ սիկուրթա ազա իտիր։

Եանկէս էրզլը հէր նէվի պէնա վէ էչա իւլէրինէ սիկուրթա ազա իտիր։

Նէքէատ էրզլերէս էրզլը մալ, էվրաղը նեգամիյէ վէ վարոր սիկուրթա լարը գապալ իտիր։

Հիսէսարանա՝ 1896ռ 18½%, 1897ռ 18%, 1898ռ 18%, 1899ռ 16%։ Թէմեթիւ Թէվֆի իթմիշ տիր։

Շիրքէթին Գանքէրլէրը (Ֆէրտինանտ Գրէֆ Լիմնի, Անկլօ Աւսթրիան Գանգ, Օսֆեռռա Գանդ Նասիոնալ Պիւլկար։)

Թաշրալար իշին միւսաիթ վէ միւթէզէր սէնէթ սարնըլմաղա սարը։ Թիւրքիա իշին ամամի սէնէթ։ ԱՐՇԱԿ ՈՒՆՋԵԱՆ

Գալաթա, Թահթապրուն խան, Գանգ Օթթոման գարշուսընա 34

Ա՞ԻԹԹՕՆ

ԵԱՆԿԸՆԱ ԳԱՐՇԸ ՎԷ ԷՕՄՐ ԻՂՈՒՆ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԻԱՍԸ

1828 ՎԷ 1829ՏԱ ԹԷԷՍԻՍ ԳԸԼԷԼՆՄԸՆ

Մէրքէզի իսարէսի — Բարիզսէք, Վանսօմ մէյտանընա 9 նիւմէրօլը
տայիրէի խուսուսիյէրինեն

ՀԱՐԻՒ ՇԻՒՊԷՍԻ

Սէրմայէ վէ իհթիեաթ 119,000,000 ֆր.
1903ին թահսիլաթը 25,000,000 »
Թէմիէ օլունան զիյան 284,000,000 »
Սիկուրթայը էմլաքրն գէյմէթի 22 միլիառ։

ԷՕՄԻՒՐ ՇԻՒՊԷՍԻ

Սէրմայէ վէ իհթիեաթ 161,500,000 ֆր.
1903 բրիմ թահսիլաթը 12,000,000 »
Թէմիէ օլունան զիյան 130,000,000 »
Սիկուրթատալանէօմիւրը 278,000,000 »

ՊՈՒՇԻՐԷԹ կաեէթ միւսաիթ չէրթիթ իլէ Թիւրքիատա սիկուրթա գայտ իտէր էՕՄԻՒՐ ՍԻԿՈՒՐԹԱ չիւպէսի տաթի միւթէէիֆ սուրէթաէ վէ խուսուսի էհվէն ֆիյաթլարա էօմիւր սիկուրթա իտէր։

ՇԻՐՔԷԹԻՆ ՊԱՆԳԱՄԸ «Օսմանլը Պանքասը» տը. Թիւրքիա վէ Մէմալիքը Շարգիյէ իչին միւտիրիյէթը ումումիյէ = Սթամպօլտա, Սուլթան Համամընտա, Քաթրրնը Օղլու Բասաժը

Միւտիրի ումումիսի — ՍԻՄՈՆ ՔԱՑՍԷԼԻԵԱՆ
Միւտիր մուավինի — ՄԻՀՐԱՆ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

Ղալաթատա այրուճա պիր Շիւպէսի օլտուղը կիպի՝ Մէմալիքը Մահրուսէնին հէր Թարաֆընտա տախի խուսուսի ամանսլարը վար տըր։ 9

ՈՒԷՍԴԸՐՆ

TORONTO — WESTERN — 1851

ԲԱՐԼԱՄԷՆԹՆԵՐՆ ԳԱՐԱԲԸ ՄԱԽՍՈՒՍԸՑԱԼ ԹՕՐՈՆԹՕ ՎԷ ԼՕՆՏՐԻՆԱ

1851Է ԹԷԷՍԻՍ՝ ՕՂՈՒՆՄ Շ

ԵԱՆԿԸՆԱ ԳԱՐՇԸ ԻՆԿԻԼԻԶ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԻԱՍ՝ ՅՍՐ

Թաղմին օլունան զիյանլարը մէճմուա	ինկ. ֆրա 6,000,000
Մէվճուտ ագչէ վէ հասըլաթը սէնէվիյէ	» » 1,250,000
Բեսմիլէն Թէէսիյէ օլունմուշ սերմայէ	» » 410,000

Թուրքիա չիւպէսիին միւտիրի ումումիսի. ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ
Իսթանպոլ, Սուլթան Համամ, Գոմբրրը օղլու խան Ն՝ 43.

Թաշրալարտա իշկիւզար վէ միւթէպէր սէնէթլէր սարնըլմաղա սըր։
ԻՍԹԱՐ.— Շէհրիմիզին էն մասրուֆ Ֆրանսըզ վէ Ալման գումբանիալարրն սերմայէսի հասըլաթրնա նիսպէթէն 100 % օլտուղը հալա Ուէսթրրընի 195 % տիր։ Իլէթ պու հասգիամ Ուէսթրրն բագիպէրինէ թէվզիֆիւգ իթմէյէ էն պէօյիք թէէտինամ պրր։ 10—5

ՆՇԱՆ ՉԱՄԻՉԵԱՆ

ՄԱՆԱՎԷՏ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՄՈՄԵՐՈՒ
ԵՒ
ՄԱԿՐՑՈՒԹԵԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ

Կ'ուզէք հարսնիքներնուդ փայլը ուելցնել, գեղատիպ «էֆէ» մը տալ մօմերուն, դիմեցէք ՆՇԱՆ ՉԱՄԻՉԵԱՆ-ի վաճառատունը, ուր բացի պատրաստ գտնուած մօմերէ կը պատրաստուին նաև մեծ խնամով վերջին նորաձեւութեամբ ճաշակաւոր մօմեր, անմրցելի ժան գիներով։ Կը գտնուի նաև հոն հարսի կիւլանաց, քղանց, քղանցի մնուկ, դարդարուած կողով, ծաղիկ, փեսաւոր, եւն. եւն. եւն.։

Փութացէ՛ք, հարսնիքի Ցերեր, այցելել անդամ մը Նշան Չամիչեանի հարսանեկան մոմերու հոն վաճառատունը, ուր ոչ միայն ձեր ճաշակը, այլ նաև ձեր քսակն ալ գոհացում պիտի գտնէ։

ՍԵԱՎ ՏԵՂ ՋԷՐԹԱՔ

ՆՇԱՆ ՉԱՄԻՉԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆամաճրօ խանի տակ, թիւ 86 19—50

Ֆարմանիա Թէյ

ԹԷՅ ՄԻ�smՆ ԳՆԷՔ

Առանց անգամ մը այցելելու

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ
ԵՒ
Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
ԸՆԴԱՐՁԱԿ ՎԱՃԱՌՈՒՏՈՒՆԸ

Կ. Պոլիս, Ճէլալ Պէյ խանի տակ, թիւ 10

ՈՒՐ ՊԷՏԻ ԳՏՆԷՔ

Կոթռով եւ զարդարուն տուփերով եւ անհամեմատ աժան գնով ամենաճոխ մթերք

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՉԻՆԱՍՏԱՆԻ
ՀԱՎԱՆԱԳԻ ՍԻՍԼԱՆԻ

ԹԷՅԵՐՈՒ

եւ մանաւանդ

ՃԱՐՈՆԱԿԱՆ ԸՆՏԻՐ ԹԷՅ

Մասնաւորապէս Պոլիս ներածուած

Գաւառաց մէջ

Մեր վաճառատիրը փնտռեցէք
1—50 Բոլոր թէյ ծախողներուն քով

ՐԷՀՊԷՐԸ ՄՈՒՍԻԳԻ

(Առանց վարժապետի «նօթա» սովրելու կերպը)

Նշանաւոր Զայնագրագէտ Թանպուրի ՀԷՄիլ էֆ.ի այս հեղինակութիւնը նօթայի վերաբերեալ, մինչեւ հիմա հրատարակուած բոլոր գրքերը կը գերազանցէ։ Գնելիք որ նօթայի վարժուիլ կը փափաքին, գնելու են այս կարեւոր հեղինակութիւնն՝ որուն չնորհիւ չատ բաներ մը ժամանակակիցի մէջ և առանց մասնաւոր ուսուցչի մը պէտքն զգալու, պիտի կրնան կանոնաւոր հրմատութիւն մը սանալ։ Բեհկէր Մուսիգին նօթայի և նուագներու ազորդներու վերաբերեալ բոլոր կանոնները պարունակելով հանդերձ՝ քանի չափ բնտիր երգերու և քառասունի չափ ալ փէյրէվ և սէմայիներու նօթաները կը պարունակէ. ուրիշ ոչ է չարգրի և կամ նօթաներու աւելորդ տակ տալու հարկ չէ մնացած։

Գինը 12½, կազմուածք 17½ ղրշ. է

Կեդրոնատեղին է՝ Պապր Այի ճատէսի Զէման գրատունը Նօ 38։

Գաւառներու համար 5 ղրշ. թղթատարի ծախք կ'առնուի։ Կը գտնուի նաև բոլոր հայ գրավաճառներու քով։ 10—2

ԱՐԱՄ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՑԱ

Գոլիս, Գանչէ Գաբու, Գիճ Գիր Զէօֆէի դիմաց

Կատարեալ դարմանչամ ամէն տեսակ փոած ակռանկրու, և նամանաւանդ կը գործէ արհեստական ակռաներ բնական գեղեցկութեամբ։

Ամէն առաւօտ կանուխ կը գտնուի Սկիւտար, Իսթիֆէ, իր բնակարանը։ Եւ ամէն օր 5—11 դիմել Գոլիս. Գանչէ Գաբու, Գիճ-Գիր-Զէշիմէին դիմաց։

Կիրակի օրերը ժամադրութեամբ 50—4

ԹԱՒԹԱՊՐՈՒՆԵԱՆ ԹԷՐԶԻ ՅԱԿՈԲ

Մանտոտ Բաղատա Մանասարը խանը՝ 32 նօմէրօիլէ մուլաքաքամատատ սրմարլամա էլպիսէ իլէ մէշղուլ օլուպ, վագրին կիտիրիրէ մուվաֆրգ սուրէթա թէ պէյնիրի էլպիսէ եարսրը կիպի, պաղրճա տիւիւրն էլպիսէլերի վէ սարի քոստիմէրի սէօզ վէրտիկի կիւն վէ սաաթատ սէպաթ իլէ հազրը իտէր։ Թիւճարան հազրճըլարը իլէ վէ սարի ատամլարընա հաֆթալրգ իլէ տարի էլպիսէ եարար. պու խուսուս թէյրիֆ իտէէք զէվաթրն մութլագ սուրէթէ հօշնուտիյէթինի մուհիպ օլաճաղնան իլանը մէզքիւրէ իպթիտար օլունմուշ տրը։ 50—8

ՇԻՒԲՐԱՆ էճզախանէսինետ մուալիմ քիմիակէր Վասիլ Նաում պէյ թահսիլաթ եարբայոր։ 14—20
Գաստրէօյ

HUILE DE HOG

ՀՕԿԻ ՄՕՐԻՒ ՁԷԿԱՆ ԹԱՐՄ ԻՒՂ

Հանրածանօթ են այն առողջապահիկ արդիւնքները զորս վատառողջ, անարիւն կամկործքի հիւանդութիւն ունեցող անձերը կ'ստանան թարմ մօրիւ ձէրդէն հանուած իւղը գործածելով։ Այսու հանդերձ, կարեւոր արդիւնքներ ձեռք ձգելու համար, անհրաժեշտ է որ այս իւղն ըլլայ անարատ և ընտիր։ Աւելորդ է ըսել որ պէտք է զգուշանալ կեղծ կամ սորին իւղերէ, որոնք փոխանակ գոհացուցիչ արդիւնքներ տալու, առողջութիւնը խանգարելու միայն կը ծառայէն։ Հօկի իւղը ամէն երաշխաւորութիւն կ'ընծայէ անարատութեան և ազդեցութեան, որոնք անհրաժեշտ են հիւանդներուն։ Իր անմրսելի գերազանցութիւնը աւելի քան 50 տարիէ ի վեր ճանչցուած է ամբողջ աշխարհի բժիշկներուն կողմէ և վարձատրուած է բոլոր արուեստահանդէսներէն։ Հօկի իւղը եռանկիւնաձեւ շիշերով միայն կը ծախուի։ Արտաքին պահարանի վրայ պահանջեցէք գործարանատէրերու միութեան երաշխաւորութեան դրոշմը։

EMULSION HOGG

ԷՄԻԼԶԻՕՆ ՀՕԿ

ԿՐԱՑԻՆ ԵՒ ԱՂԱՑԻՆ ԻՊՕՖՈՍՖԻՏՈՎ ԵՒ ԿԼԻՊՍԷՐԻՆՈՎ

Մօրիւ ձկան իւղի գործածութիւնը դիւրացնելու համար անոնց որոնք զզուանք կ'զգան, — այսինքն աղոց և մանաւանդ չափահասներուն համար — Մ. Հօկ օշարակը չենած է իրեն մաուկ մօրիւ ձկան անարատ իւղին, և կը ծախէ «Էմիւլզիոն հօկ» անունով։ Պարտաւորութեան այս եղանակը չատ կը դիւրացնէ իւղին գործածութիւնը։ Էմիւլզիոն Հօկը, որ Հօկի իւղին բոլոր բարերար յատկութիւններն ունի, կիրի և ազի իպոֆոսֆիթով և կլիսերինով խառնուած է։ Իր բաղադրութեան մէջ գտնուած նիւթերուն գերազանցութիւնը ուրիշ ամէն իւղէ նախընտրելի կրնէ դայն։ Հօկի մօրիւ ձրկան թարմ իւղն և Էմիւլզիոն ճոպը եռանկիւնաձեւ շիշերով կը ծախուին ամէն մեծ դեղարաններու և դեղի մթերանոցներու մէջ։ Արտաքին պահարանին վրայ պահանջել գործարանատէրերու միութեան երաշխաւորութեան դրոշմը։ Մեծաքանակ յանձնարարութիւններու համար դիմել Մ. Է. Ծանոթի, Ի Կ. Գոլիս։ 50—19